

2. Slipuzhnik

Гипн не упертица

1926p



23 SEP 2009

871

Կ. ԽԵՐԻԱՍՆԵԱՆ

# ԳԻՐ ՈՒ ԱՐԿԵԱՏ

(ԴԵՄՔԵՐ, ՅԵՐԿԵՐ, ՀԱՐՑԵՐ)

Կ. ԽԵՐԻԱՍՆԵԱՆ

1926

26 MAY 2005

801

P-52

Վ. ՅԵՐԶԻԲԱՇՅԱՆ

Վ. Միսակչյանի աշակերտ Հ. Գրիգորյանի  
պատկերազարդ շարժվող-պիկտուրա

24 օգոստոս 1957  
Երևան

Երևանի ԼՂՊՈՒՄ  
Կ. Միսակչյան

# ԳՐՈՒՄԱՐԿԵԱՆ

(ԳԵՄՔԵՐ, ՅԵՐԿԵՐ, ՀԱՐՅԵՐ)

  
801

Լ Ե Ն Ի Ն Օ Կ Օ Ն  
1926

17 APR 2013

1090

2

### „Յ Ե Ր Ե Ք“ Խ Ո Ս Ք

Գրականությանը և արվեստին նվիրված հոդվածների այս փոքրիկ ժողովածուն շատ բան չի խոստանում: Հեղինակը հավակնություն չի ունեցել գրական—քննադատական խոր վերլուծումներ և վճիռներ առաջադրելու, այլ պարզապես ցանկացել է արձագանքել և հաղորդակից լինել գրական շարժման և արվեստի խնդիրներին, վորոնք նոր ծավալ և կշիռ են ստանում մեր որերում, Խորհրդային Միության մեջ ընդհանրապես, և Խորհրդային Հայաստանում՝ ինչ վոր, անկասկած, նշան է կուլտուրական բացահայտ վերելքի, հին արժեքների վերագնահատման՝ և նոր արժեքներ ստեղծելու ուղիցով:

---



1657-88 (33-58)

Գրառեպլար № 473.

Տիրաժ 1000 որ.

Տպարան 3-րդ դիվիզիայի քաղբաժնի:

ԳԱՐԻԵԼ ՍՈՒՆԳՈՒԿՅԱՆ

ՀԱՅ ԵՌՇՈՐԱԴՈՒՅՆ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԸ

---

(Վերագնահատման փորձ)

(Ծննդյան հարյուրամյակի առթիվ)

1825—1925

I.

Գ. Սունդուկյանը ճանաչվում է վորպես հայ խոշորագույն դրամատուրգը: Ամենքը ընդունում են այդ: Այս հաստատումը իրավացի չե և բղխում է այն իրողութունից, վոր դրամատիկական արվեստը հայ գրականության մեջ՝ չի տվել այնպիսի կարկառուն յերկ, ինչպիսին է Գ. Սունդուկյանի «Պեպոն»: Ով ծանոթ է մեր թատրոնի պատմության, նրա համար սա անվիճելի չե:

Կեղծ կլասիցիզմը և միամիտ ոռոմանտիզմը տիրապետում եյին առաջին շրջանի հայկական թատրոնում: Խաղում եյին վողբերգութուններ, վորոնց մեջ հերոսները ճամարտակում եյին և սղոցում ոգը «կիկերոնյան» մենախոսութուններ վողբելով: Թատրոնը փայլվիլուն թագերի, սաղափարտների, դաշուհի և թուհի մի հանդիսարան եր, ուր հասարակութունը գնում եր «թամաշի»: Այս յերևույթը, սկսյալ մեր թատրոնական պատմության սկզբից, հասնում եր համարյա մինչև մեր օրերը:—Մեր հիշողության մեջ դեռ թարմ են «Վարդանանքը», «Արշակ Բ-ը», «Սանդուխտ կույսը» և այլն:

Հայ քաղքենի հասարակութիւնը կատարում եր իր պարտքը, «Թամաշի» գնալով նման ներկայացումներին:

60-ական թվականներին Թիֆլիսում յերևան ե գալիս Թատրոնական մի նոր սեռ—զավեշար կամ կատակերգութիւնը: Մեր նպատակը չե պատճառները վերլուծել, միայն այսքանն ասենք, վոր դա ժամանակի պահանջն եր: Հասարակական կյանքը սկսել եր շարժվել—ազատամիտ բուրժուազիայի սկզբունքներն ելին քարոզվում նախ «Հյուսիսափայլի» և ապա «Մշակի» միջոցով: Այդ սկզբունքները քարոզվում ելին հանուն հասարակական պրոգրեսի, լուսավորութեան, գիտութեան: Հայ լուսավորիչները յուրահատուկ «իդեալիստներ» ելին, վորոնք ճշգնում ելին գիտական իրապաշտ մեթոդներով կառուցել նոր հասարակակարգ, քննադատութեան յենթարկելով հայ իրականութիւնը, նրա թերի կողմերը, և անխնա ձողկելով հայ մարդու պակասութիւնները, տգիտութիւնը, հայ ընտանիքի անմխիթար դրութիւնը, հոգևորական և առևտրական դասի խավարամտութիւնը: Հրապարակախոսութիւնը մեր իրականութեան մեջ ստանում ե վորոշ կշիռ, յերեվոլյութները քննութեան են առնվում և հասարակական արժեքները վեճի յենթարկվում:

Թերութիւնները և կոպիտ բարքերը ձողկելու միջոցներից մեկն եր հրապարակախոսական թերթները (Ֆելետոնը), վորի հիմքը դրել եր Կոմս

Եմմանուելը (Միք. Նալբանդյանը), հետո տաղանդավոր հրապարակախոս Արծրունին և Գ. Սունդուկյանը (Համմալ):

Յերգիծանքը դառնում ե մի կարևոր գեներ: Նման շարժում մենք տեսնում ենք մոտավորապես նույն շրջանին, Կ. Պոլսում՝ հանձինս Սվաճյանի և մեր հաճարեղ յերգիծարան Լ. Պարոնյանի:

Ասված ե — գրականութեան ամենաիրապաշտ սեռերից մեկը կոմեդիան ե: Կոմեդիայի հիմքը յերգիծանքն ե, ծաղրը, յերբեմն թունոտ սարկազմը, — իսկ բարձր և վսեմ զաղափարները, իդեալները ընդունված չե ծաղրի յենթարկել — ծաղրի յեն յենթարկվում միայն իրականութեան, կամ ճշմարտութեան և բանականութեան դեմ մեղանշող զաղափարներն և իդեալները, վորոնք մարմնանում են իրական հատկանիշներով ոժտված աիպերի մեջ: Գ. Սունդուկյանը զգաց այդ, և ընտրեց կատակերգութիւնը «բազառային սեռը» ինչպես անվանում եր «Հայկական Աշխարհ»-ի յեպիսկոպոսացու խմբագիր՝ Ստեփանեն:

Գ. Սունդուկյանը բարձր կրթութիւն եր ստացել, ուսումնասիրել եր համաշխարհային գրականութեան մի քանի մեծ վարպետների գործերը: Նա ծանոթ եր Մոլլերին, Գոգոլին, Գրիբոյեդովին, և տեսնում եր վոր նրանք իրապաշտներ են, գիտում են կենցաղը և սալիս են կենցաղային հարազատ պատկերներ: Գ. Սունդուկյանը բավական ազդել և Մոլլերից: Իրամատի-

քական տեխնիկայի մեջ նա պահում է կլասիկ դրամայի կանոնները:

Գ. Սունդուկյանի արվեստի մեջ կան կլասիկական ձևական տարրեր, բայց նրա արվեստի հիմնական կողմը բեալիստական է:

Բացի ոտար դրականության ազդեցությունից, ժամանակի հասարակական փոխհարաբերությունները մեջտեղ են բերում թանձրացյալ պահանջներ:

Առևտրական կապիտալը զարգանալով առաջ է գալիս մի ամբողջ խավ, վորն ապրում է ասիական ձևից լեռնապահանջման անցնելու շրջանը:

Յերոպականացման ուղին ելին շեփորում ժամանակակից հրապարակախոսները: Սակայն լեռնապահանջումը կատարվում էր վոչ նրանց ցանկացած ուղղությամբ: Դա ժամանակի անհրաժեշտությունն էր, վորի շեփորը հնչում էր Կովկասն Յերոպային միացնող առաջին չերկաթուղու շոգեմեքենայից:

Փոփոխման են լենթարկվում—նախ արտաքինը, կենցաղի դրսերևույթը, ապա նահապետական բարքերը, ստեղծելով բազմաթիվ հակասություններ և հակամարտություններ, տրագիդիիսկական տարրերը, վորոնք արտահայտելու համար մի անհրաժեշտություն էր դրամատիկական գրականությունը:

Յեւ անա այդ անհրաժեշտության արձագանք է տալիս Գաբրիել Սունդուկյանի տաղանդն իր «կատակերգություններով»:

Արդեն ասացինք, վոր այդ ժամանակի թատրոնը չէր կարող պատկերել իրականությունը, վորովհետև արվեստի մասին չեղած հասկացողությունները շատ «բարձր» ու «վսեմ» ելին, իրենց արվեստագետների կողմից:

Նրանք ամոթ ելին համարում բեմի վրա բարձրացնել առօրյա կյանքով ապրող մարդուն. բեմական լեզուն հետտորական էր, վոճը վերամբարձ: Մամուլը սուր քննադատության էր լենթարկում բեմը պղծող լերգիծաբաններին, վորոնք հանդգնում ելին հայհույական բառեր, ինչպես— «ավանակ, ախմախ»—արտասանել բեմի վրա (Լեո, «Գր. Արժրունի»):

Ազգային խնամակալ կամ հոգաբարձու աղան չէր կամենում այնպիսի թատրոն գնալ, ուր ծաղրվում ելին իր գասին պատկանող վաշխառուները, կեղծ բարեպաշտները, խաբեբա վաճառականները: Իսկ առանց ազալի գրպանի, ժողովուրդն անկարող էր իր սեփական թատրոնն ունենալ:

60-ական թվականներին թատրոնական իրապաշտ ուղղությունն արտահայտություն էր ժամանակի վոգուն. դա բնորոշվում էր գարաշրջանի ամբողջ հոգեբանությամբ: Հայ իրականության մեջ սկսվել էր նոր շարժում:

Մենք տեսնում ենք մի շարք թատրոնական գործիչների, ինչպես՝ Փուլինյան, Տեր-Գրիգորյան, Մ. Պատկանյան, վորոնք նախադրյալներն ելին իրապաշտ շարժման:

Անհատը չէր կարող նոր թատրոն ստեղծել—  
Շեքսպիրին ժամանակակից կային բազմաթիվ  
գրամատուրգներ, վորոնք մշակում էին նույն սե-  
ռը, գրեթե նույն ուղղութիւնը: Դա մի դարա-  
շրջան էր, վոր ունեւր մի ընդհանուր հոգեբանու-  
թյուն: Յուրաքանչյուր տաղանդ արտահայտու-  
թյուն է իր դարաշրջանի հոգեբանութեան: Հան-  
հանձարները միայն ավելի ցայտուն, ավելի հատկա-  
նշական կերպով են արտահայտում այդ ընդհա-  
նուր «մտավիճակը», ինչպէս ասում է մեծ քն-  
նադատ Ի. Թենը:

Գ. Սունդուկյան այդ շրջանի մեր Շեք-  
սպիրն է: Համեմատութիւնը կարելի չէ համարել  
ձեւական, սակայն յեթե նկատի ունենանք նրա  
տաղանդի գագաթնակետն և համեմատենք իր  
ժամանակակից գրամատուրգների հետ, բաղդա-  
տութիւնն այնքան էլ անհավական չի թվա: Բայց  
և այնպէս Գ. Սունդուկյանի տաղանդն ունի իր  
որիդինալ կողմը, յեթե կարելի չէ այսպէս ար-  
տահայտել, նրա տաղանդն անհավասար է:  
Այդ անհավասարութիւնն աչքի չէ զարնում ավելի քան մի այլ անհավասար տաղանդ ունեցող  
հեղինակի մոտ: Այս յերևույթի մասին արժե հի-  
շել նույն Ի. Թենի կարծիքը— վերջինս ասում է,  
վոր տիպարների աղոտացումը պատճառ է դառ-  
նում ստեղծագործութեան թուլացման: Հեղինակը  
իր ժամանակի կենդանի տիպարներն ավելի պայ-  
ծառ է յերևան բերում, յեթե նրա տաղանդն ան-  
միջականորեն դիմում է իրականութեան: Իսկ ան-

հետացած տիպարների կամ յերևույթների վերար-  
տադրութիւնն ավելի դժվար է, վորովհետև լուկ  
հիմնվում է յերևակայութեան վրա և դուրս է գա-  
լիս կեղծ ու անկյանք:

Թվում է, վոր այս յերևույթին մասամբ  
կարելի չէ վերագրել և Սունդուկյանի յերկերի  
գեղարվեստական անհավասար արժեքը: Ինչ հա-  
մեմատութիւն կարող է լինել «Պեպոյի» և  
«Սեր և Ագատութեան» միջև:

60-ական թվականների և 20-րդ դարու առա-  
ջին քառորդի միջև հսկա տարբերութիւն կա:  
Թվում է ծերունի գրամատուրգի տաղանդը հոգ-  
նել էր և չէր կարող դիտել կերպարանափոխված  
իրականութիւնը: Մոտավորապէս նույն բանը  
ասում է Ի. Թենը՝ Միքել Անջելոյի տաղանդի  
մասին, համեմատելով նրա ծերութեան շրջանի  
գործերը նախկին գործերի հետ: Այս խնդրով  
զբաղվելը մեր ծրագրի մեջ չի մտնում, մնաց  
վոր, սա շատ դժվար մի հարց է և գործ ունի  
տաղանդների կամ հանձարների ուղեղի մեջ կա-  
տարվող «մոլեկուլային պրոցեսի» հետ, մի բնա-  
գավառ վորը դեռ ուսումնասիրված չէ:

## II

Գ. Սունդուկյանի առաջին կարևոր յերկը  
«Խաթաբալա»-ն է, նախ յերկու գործողութեամբ  
ներկայացված 1866 թվին, ապա ամբողջացրած  
1879 թ.: Այս պիեսը հետաքրքիր է այն տեսա-  
կետից, վոր Գ. Սունդուկյանը նրա մեջ գծում է

իր գրական գործունեություն հատկագրիծը, նշում է իր նյութին և ուսումնասիրության բնագավառը:

«Սաթաբալյան» գերագանցորեն կենցաղական պիես է: Մենք նրա մեջ տեսնում ենք բաղբենի առևտրական—վաշխառուական դասի բարբերի հարագատ պատկերը: Կարապետ Զամբախովը տիպիկ խաբեբա չէ, «արշինի և կշեռքի» կեղծարար հերոսը, վորի համար վոչ մի սրբություն գոյություն չունի. նա նույնիսկ արդարացնում է իր վարքագիծը տեսական հիմնավորումով. նա խաբեբայություն թե որ ետիկն է. աշխարհը վողջ հիմնված է խաբեբայության վրա—առևտուրը վոչ այլ ինչ է չեթե վոչ խաբեբայություն: Զամբախովի համար ամեն ինչ ապրանք է, նույնիսկ իր սեփական աղջիկը, վորին մարդու տալն էլ մի փեշակ է, ամեն ինչ փեշակ է ու առևտուր: Գ. Սունդուկյանը բնորոշ գույներով նկարում է Զամբախով—տիպին և արտաքինով պատկառելի այդ աղային դուրս է բերում ամենաձիճաղելի դրություն մեջ (Յ-րդ գործ. ուր նա լարում է հանրածանոթ «սկապենյան մեքենայությունը»):

«Սաթաբալյան» մեջ տիրապետում է չերգիծական—զավեշտական կողմը. հենց Փաբուլայի զսպանակը հաստատված է մի թյուրիմացություն կամ «թյուրատեսություն» վրա: Պիեսի կառուցվածքի մեջ կան անհավանական դրություններ, անգույն տիպեր, ինչպիսին է Գեվորզը—ինտիլիգենտ, գրական բարբառով խոսող փեսա-

ցուն, վորն իր միամտությամբ արդարև ծիծաղելի չէ, և կամա՞ ստանում է այդ դերը: «Սաթաբալյան» մեջ դրամատիքական դինամիկա գոյություն չունի, բացի տգեղ հարսնացու Մարգարիտի հոգու մեջ կատարվող լուռ դրամաչից, մինչդեռ նույն ձևով վորակված «Պեպուլի» մեջ խնդիրը բոլորովին այլ է: Մարգարիտը մի գոհ է իր դասի հրեշավոր հասկացողության, սակայն պիեսի մեջ նա բառի բուն իմաստով գործող անձ չէ, այլ անշարժ պատկեր, վորը վորոշ հույզ կարող է արթնացնել միայն հանդիսատեսի խորհրդածություն միջոցով: Սա բավական չէ դրամա ստեղծելու համար: Այնտեղ ուր բաղխում, պայքար բացակայում է, դրամատիկ տարրն էլ է բացակայում:

«Սաթաբալյան» մեջ Սունդուկյանը դեռ չի մտել իր գեղարվեստական ստեղծագործության վերջնական հունը:

«Քանդած Ոճախը» «Պեպուլից» հետո չէ գրված, սակայն նկատելի չէ, վոր նախորդի գեղարվեստական նվաճումներն այստեղ նվազում են: Սունդուկյանի տաղանդի վերելքը և զագաթը գտնվում են «Պեպուլի» մեջ: «Քանդած Ոճախը» մի վավեմիջակություն է, ինչպես նրա գրեթե մյուս բոլոր չերգերը: Սակայն չնայած իր գեղարվեստական միջակ արժեքին, «Քանդած Ոճախը» մի վավերագիր է և տալիս է այդ ժամանակի թիֆլիսի քաղքենի վաճառական դասի կենցաղի հարագատ պատկերը:

կարապետ Չամբախովի թեորիան, «արշինի և կշեռքի» կեղծարարության և խարբեայության վրա հիմնված առևտրի հոգեբանությունը, այստեղ չերևան է բերված Փարսիղի մեջ, մի մարդ վորի կարծիքով «մարդ է դառնալու» այն աշակերտը, վոր իր վարպետին գերադանցում է խաբելու ճարպիկությամբ: Փարսիղին հակադրված է մի այլ վաճառական՝ Ոսեփը—հին նահապետական առաքինության ներկայացուցիչը, վորը ցանկանում է «հարստ առևտուր անել», բայց համապարփակ կեղծիքի և բուրժուական գոյության կռվում չի դիմանում և կործանվում է: Ոսեփի համար աշխարհը անբարոյականացել է: Դրա պատճառը նա համարում է «չեվրոպականացումը» ուսումնառ լուսավորությունը, վորոնք, նրա կարծիքով, մաքուր կենցաղն այլանդակող ուժեր են: Անցման շրջանի հակասությունն է, վոր խոսում է Ոսեփի մեջ. նա չի հասկանում չեվրոպականացման պատճառ չեղող շարժիչ ուժերը—նրանից այդ պահանջել դժվար է: Նա կատարում է տեսներով նահապետական բարքերն այլասերող նորություններն, ակումբները, լոտոն, պարահանդեսներն և նորաձևությունը: Պապերի կենցաղը և բարքը նրա համար իդեալ են:


«Քանդած Ոջախը» առևտրական կապիտալի սովորական խաղերից մեկն է, մի անխուսափելի աղետ, վորը բղխում է հենց այդ սխտեմի ելությունից: Ոսեփն և Փարսիղն իրենց դասակարգի ընդհանուր շահերի դասավորության անողոք ան-

հրաժեշտության խաղալիքներն են: Յեթե Ոսեփի գործերն աջ գնալին՝ հազիվ թե նա այդքան հուստես դառնար: Հենց պիեսի սկզբին նա խոսում է ինչ վոր առևտրական ձեռնարկի մասին, վորի անհաջողության դեպքում կարող եր վտավգլխով կործանվել: Ուրեմն, սկզբունքն այստեղ մի կողմն է մնում. Ոսեփը նույն զսպանակին է հաստատված ինչ՝ Փարսիղը. գուցե նրանք չերկուան ել, նման հանգամանքներում, նույն ձևով վարվելին իրար հանդեպ: Ոսեփի ցասումը, բողբջը, վատ տրամադրությունը ցուցումն են իր առևտրական գործառնության անհաջող ընթացքի:

Այս նկատառումներով կարելի չէ այդ չերկու վաճառականներին իրարու հակադրել, վորպես գաղափարի մաքնացումներ և նրանցից մեկի մեջ վորոնել դրական՝ մյուսի մեջ—բացասական մի տիպ: Սակայն և այնպես «Քանդած Ոջախի» մեջ կա զրամատիկ տարր. վերջին տեսարանում դառնում է նույնիսկ վողբերգություն, տարտամորեն հիշեցնելով Շեքսպիրի «Թիմոն Աթենացին»: Սուռնդուկյանն աշխատել է այս պիեսի մեջ հանդես բերել շար նախանձը, վորպես մարդկային բացասական մի կողմ: Նախանձը մարդու հատուկ մի զգացմունք է, ինչպես խանդը. սակայն կարևոր են այս զգացմունքի շարժառիթները.—բուրժուական անկազմակերպ հասարակության մեջ այդ զգացմունքները դառնում են անսանձ, անզուսպ: Համաշխարհային գրականության հուշակավոր չերկերից մի քանիսը նվիրված են այդ զգացմունքի վերլուծության:

33-58

1654/1



Ոսեփի բարոյական իդեալը ցոյացումն է նահապետական կենցաղի: Այդ կենցաղը բայքսովում է արտաքին նորամուտ ուժերի ազդեցութեան տակ:

«Քանդած Ոջախը» մի աններդաշնակ ընտանիք է: Աղջիկը՝ Նատոն, թեթևաոլիկ, մակերեսային կրթութիւնն ստացած, մեղշանական որիորդի տիպ է, վորի իդեալն են կազմում հագուստը, բուլվարը, կրուժոկը: Մայրն՝ աղջկանից ավելի տգետ, բայց նորաձևութեան սիրահար, լոտոյի և թղթախաղի յերկրպագու: Մայր ու աղջիկ կարծես դաշ՝ են կապել հոր դեմ, վորի դրութեան մեջ չեն մտնում: Նրանք այնքան են կուրացած իրենց մողայով, վար չեն նկատում, թե ինչպես անկուճի ծալքին է կանգնած իրենց ոջախը: Ահա թե ինչ աստիճանի յե հասնում քաղքենի անբովանդակ և անիմաստ հոգեբանութիւնը:

Ինչ է ներկայացնում ինտիլիգենցիան, հանձինս յերիտասարդ չինովնիկների և իրավաբանների: Նրանց ներկայացուցիչ Ալեքսանդրը միմիայն մեկ իդեալ ունի—դրամը. նա սիրահարվում է ոժիտի վրա: Տափակ կարչերիստ Փրանտը իդեալական փեսացու յե քաղքենի հասկացողութեան համար:

Գ. Սունդուկյանը Ոսեփին դրական տիպ դուրս բերելով՝ կարծես մի տեսակ պաշտպան է կանգնում նահապետական անապարտ կենցաղին:

Սունդուկյանը նոր զարգացող բուրժուազիայի իդեալների յերգիս չե. դրա համար նրան

չպետք է համարել բուրժուական գեղարվեստագետ, բառի նեղ իմաստով:

Նա իր հերոսների մեջ չի մարմնացնում բուրժուական լիբերալիզմի գաղափարախոսութիւնը: Նա մի իդեալիստ է, վոր ցանկանում է պայքարել հանուն ճշմարտութեան ու արդարութեան, առանց նկատի ունենալու կենցաղը հեղաշրջող տնտեսական և հասարակական ազդակները: Դրա փոխարեն Գ. Սունդուկյանը, իր պիեսների մեջ և մասամբ իր Ֆելյետոններում, ձգտում է հարուստ դասակարգի բացասական կողմերը, պաշտպան հանդիսանալով շահագործվող մշակին, հալալ քրտինքով ապրող աշխատավորին: Այդ տեսակետից հատկանշական է, վոր նա իր գրական կեղծանունը Համալ է դրել: Սա յե կազմում այն խոշոր առավելութիւնը, վոր արժեքավորում է Սունդուկյանի ստեղծագործութիւնը մեր գրականութեան մեջ:

Ծնշվածներին պաշտպան կանգնել—նշանակում է արծարծել սոցիալական մի խնդիր. և իգուր չե, վոր ընկեր Սուրխաթյանը «Պեպոն» անվանում է սոցիալական պիես:

## III.

## „ՊԵՊՈՒ“

«Պեպոյի» մեջ տեսնում ենք հակոտնյա յերկու դասակարգերի շահերի հզոր բաղխումը: Այս բաղխումը ստեղծում է դրամատիքական ուժեղ մոմենտ և «կատակերգութիւնը» դառնում է իսկական դրամա:

Արուժին Զիմզիմովը Զամբախովի և Փարսիդի համագործութիւնն է, գեղարվեստորեն ավելի խտացած: Նա հարստացել է նույն մեթոդներով, խաբել, շահագործել, գրեթէ է բազմաթիվ մարդկանց—այդ նա խոստովանում է իր մենախոսութիւնն մեջ: Նրա «խիղճը» վաղուց է քարացել. «ներքին ձայնը» լուել է. նրա հոգում բարոյական սկզբունքների պայքար չկա: Ահա այս է, վոր Զիմզիմովին դարձնում է իսկական հրեշ, մարդ մեքենա, ըստ յերևույթին անհավանական չափազանցութիւն, սակայն գեղարվեստորեն խոր ճշմարտութիւն, լուսավորված տաղանդի ուժեղ պրոթեկցիայով: Ծիշտ է՝ Սունդուկյանը Զիմզիմովի հոգու մեջ պայքար չի դրել, գեթ այդ մասին վոչինչ չեն ասում նրա խոսքերը տառացի իմաստով, սակայն գերակատար արտիստի համար այդ տիպի մեջ կան ներքին պայքար արտահայտող անսահման հնարավորութիւններ:

«Պեպոն» գեղարվեստական խոշոր արժեք ներկայացնող պիես է: Վոչ մի գիտական-հոգեբանական վերլուծութիւն, «փիլիսոփայական լուրջ տրակտատ» չէր կարող այդքան պայծառ, այդպես կառկառուն կերպով լուսաբանել դրված խնդիրը, խտացած գույներով նկարել ընկերային շահագործման զգվելի պատկերը, դիմակադերձ անել բուրժուական բարոյականութիւնը—խիղճը, բարեգործութիւնը, մերձավորի սերը...:

«Խղճի դավթարը վճրն է»,—բացականչում է բուրժուազիայի ներկայացուցիչը, վորի համար տոմարը և մուրհակը գերագույն պատգամներ են և վճռում են խղճի ու բարոյականութիւնն ինդիքները: Նրան մնում է միայն «յերևույթները փրկել», գթասրտութիւն և բարեգործութիւնն որինակներ տալ, ժամի դրան հավաքված աղքատներին կուպեկներ նետելով:

Սակայն գալիս է մի րոպե, յերբ նրա հանդեպ ծառանում է մարդկութիւնն դժբաղդ մասից, իր կողմից շահագործված և խոշտանգված հարավորներին մեկը, վորը հանդգնում է բողոք բարձրացնել կատարված անարդարութիւնն դեմ: Բողոքը բուռն է և անզուսպ, կեղծիքի և անարդարութիւնն դիմակը պատռելու վճռականութիւնով: Ահա թէ ինչն է, վոր սարսափեցնում է Զիմզիմովին և արթնացնում նրա ինքնապաշտպանութիւնն բնագղբ, վոչ թէ «խիղճը»: Վորոչ չափով ճիշտ է այն թեորիան (ըստ Ֆրեյդի), վորի համաձայն՝ բուրժուական իդեալիստները դա-

վանած բարոյական բացարձակ նորմաները վոչ այլ ինչ են, չեթե վոչ հասարակական կարծիքի ներշնչած սարսափի «վսեմացումը»: Զիմզիմովի «յերևույթները փրկելու» լոզունգին վտանգ ե սպառնում ե Պեպոն իր վճռական ըմբոստացումով: Ամեն գնով նա վճռում ե ճնշել այդ ընդ-վզումը ե հարձակողականի չե անցնում, վորպես ինքնապաշտպանության ռազմագիտական ձև:

Արութին Զիմզիմովը, հարուստ վաճառական, աղքատ ձկնորս Պեպոյին պարտ ե վորոշ գումար: Մուրհակը կորել ե. ապացուցյներ չկան: Խնդիրը պարզ ե, մինչև անգամ շատ սովորական: Արժեք դրա համար մի պիես գրել: Սակայն այդ գումարի հետ կապված են ուրիշ խնդիրներ: Նրանից կախված ե մի աղջկա ձակատագիրը, այսինքն՝ նրա բաղդավորութունը: Այս վերջին պարագան ել կարելի չե մասնակի համարել: Մի անհատի դժբախտութունը, նյութված պատահականության կողմից, շատ քիչ ընդհանուր նշանակութուն ունի: Ի՞նչ արած, մեկի դժբախտությամբ աշխարհը հո՞ չի քանդվի: Յեվ վերջպես ո՞վ ե մեղավորը, վոր այդ անստույգ գանձը խոստացված ե պատահական, կասկածելի նկարագիր ունեցող մի փեսացուի: Այս ե թելադրում գործնական «առողջ դատողութունը»: Վերջին հանգամանքը իր ժամանակին շեշտել ե մեծ հրապարակախոս Գ. Արժրունին, վորի կարծիքով կեկելի դժբախտության հիմնական պատճառը փեսացուի նյութապաշտութունն ե, ինչ վոր վերջին հաշ-

վով պատճառ ե լինում բարեբաղդության—այսինքն՝ կեկելը ազատվում ե մի ամուսնուց, վորն իրեն չեր սիրում, այլ իր ոժիտը, ե վորի հետ, ապագայում, նա կարող եր դժբախտ լինել: Այս բոլոր խնդիրներին կարելի չե մոտենալ զանազան կողմերից ե հանել բազմազան չեզրակացութուններ:

Ի՞նչն ե Պեպոյի մղած պայքարի շարժառիթը— իր քրոջ կոտորված սիրտը—ինչպես կարծում ե Վ. Տեր Գևորգյանը, «Պեպոյի» վերլուծության մեջ\*):

Պիեսի սկզբում մենք Պեպոյին տեսնում ենք կենսուերախ, աշխուժ ե անհոգ մի չերիտասարդ: Նա չի մտահոգվում աշխարհի շարի ու բարու մասին. նա ի բնե Համլետ չե. ավելի շուտ մի բանաստեղծ ե, չերք նկարագրում ե իր արհեստի քաղցրութունները: Սակայն գործողության կեսին նա հանկարծ կերպարանափոխվում ե. կարծես նրա աչքերի վրայից բարձրացնում են մի թանձր վարագույր, ե նա սկսում ե իրերը ուրիշ աչքով տեսնել: Առորչա կյանքում նա, գուցե, ունեցել ե հավատ դեպի մարդիկ ե «արդարութունը», միամիտ վստահութուն՝ դեպի շրջապատը: Բայց հիմա տեսնում ե, վոր ամեն ինչ այնպես վարդագույն չե, ինչպես ինքն եր պատկերացնում: Նա տեսնում ե, վոր կյանքում իշխում ե մի խոր շարիք—մարդու շահագործումը մարդու միջոցով,—ինչ վոր ինքը մինչ այդ չեր նկատել, վորովհետև անմիջական կերպով չեր

\* ) Վեղարվեստ № 4 (1911):

զգացել իր կաշվի վրա: Զգալով այդ շահագործման զգվելի հպումը՝ նա միաժամանակ, բնական սիմպատիայով, ապրում է իր նման հազարավորների ցավը, ահամա համեմատություն է անում իր նմանների և Զիմզիմոֆների միջև և տեսնում է իրենց բաժանող հսկա անդունդը:

«Ո՞վ իս դու, ի՞նչ մարդ իս դու» — ասում է Պեպոն ինքն իրեն: Մի այլ տեղ ավելացնում է «իս ել հաց ուտեմ, նա չեյ» (խոսքը Զիմզիմոֆի մասին է). — ահա թե վորքան խորն է մղում նրան ըստ յերևույթին պատահական այդ դեպքը: Մենք տեսնում ենք Պեպոյի ընկեր՝ միևնույն ժողովրդական խավից, կակուլիին: Սա նույն Պեպոն է. սակայն սրա մոտ խնդիրները չեն խորացվում. սրա միամտությունն ավելի ուժեղ է. գուցե դրա պատճառը այն է, վոր նա իր սեփական կաշվի վրա անմիջական շահագործումն չի զգացել: Կակուլիին ունի պատվասիրություն, քասիբի զգացումը, բայց գաղափարականությունը նրա մոտ բացակայում է. Այսպես ասած, նրա դասակարգային գիտակցությունը շատ մշուշապատ է. նա ընդունակ չէ յերևույթները ընդհանրացնել. ավելի գործնական է ցույց տալիս իրեն և պատրաստ է գործադրել վրիժառություն ասիական մեթոդը, միաժամանակ համաձայնություն գալով դասակարգային հակառակորդի հետ:

Պեպոյի տիպը մի քիչ իգեալականացած է թվում: Հենց սա չեյ կազմում է պիեսի գրական կողմերից մեկը: Մի կողմն ենք թողնում կակուլ-

լիների դասի նահապետական հասկացողությունները, բարքերը, քասիբը և այլն: Պեպոն այդ դասի լավագույն ձգտումների մարմնացումն է, վոր ունի ճշմարիտ հերոսի բոլոր հատկանիշները:

Զիմզիմոֆների և Պեպոնների միջև համաձայնությունն չի կարող լինել: Այդ չեր հասկանում կակուլին. սակայն Պեպոն, իր անզարգացած ուղեղով միասին, ներքին ինտուիցիայով զգում է, վոր նրանց բաժանող անդունդը շատ խորն է:

\*

«Պեպոյի» մեջ յերևան չեկած բոլոր տիպերը գեղարվեստորեն ամբողջացած են: Նրանք կենդանի տիպարներ են, ոժտված մարդկային բոլոր հատկանիշներով և ցույցացնում են իրենց ժամանակի և շրջապատի ճշգրիտ հոգեբանությունը:

Լոկալ կոլորիթը մեծ տեղ է բնում Սունդուկյանի յերկերի մեջ: Նա վարպետ նկարիչ է թե՛ արտաքին և թե՛ ներքին կացություններ պատկերելիս: Թիֆլիսի բարբառն՝ իր ուրույն համ ու հոտով, տեղական տարազը՝ հարազատ և գունագեղ մանրամասնությամբ կազմում են այդ լոկալ կոլորիտի հիմնական ներկերը: Սրանք պիեսի, այսպես ասած, տեխնիքական կողմերն են, ուսումնասիրված մանրակրկիտ խնամքով, նկարչի անհուն խանդաղատանքով, արվեստագետի նրբին ճաշակով: Ահա Գիբոն իր կասիկ տարազով, ասիական դանդաղեղտություն և ֆաթալիզմի մարմնացումը, արտաքին ձևերի և հոգեկան կացության

կատարչալ ներդաշնակությամբ: Նրան այլ կերպ չերևակայել անկարելի չե, թեև շատերը նրա տիպը անհավանական չափազանցութուն են համարել: Այս կարծիքն անհիմն է այն չափով, ինչ չափով վոչ մի «արվեստական» սովեր չի մթազնում Գիքոյի գեղարվեստական ամբողջ պատկերը: Կարող է պատահել, վոր նա անհավանական թվա, բայց չի դադարի իրական լինելուց—հաճախ իրականութունը մեզ անհավանական է թվում: Այս խընդրում նշանակութուն ունի և՛ գերասանի խաղը:

Դժվար է նման համառոտ քննական մի փորձով հանդես բերել «Պեպոյի» գեղարվեստական արժեքը իր բոլոր կողմերով: Մենք զլխավորաբար կանգ կառնենք պիեսի յերկու կենտրոնական անձանց, դասակարգային յերկու հակառակորդների վրա:

#### IV

Արութին Զիմզիմովը, վորպես տիպ, իր դասի պայմանագրական կեղծիքի մարմնացումն է: Սարեբայությամբ և ուրիշներին շահագործելով դիզած հարստութունը նա շոտընում է իր ջահել ու սիրուն, բայց վերին աստիճանի կեղծավոր կնոջ հրապույրների ազդեցության տակ:

«Յիս, վոր մեկ գոռչի համար հոգիս տալիս իմ».—հա նրա անկեղծ խոստովանութունը, վոր ավելի քան պերճախոս է: Նա համոզմունքներով ու աշխարհայացքով «ասիացի» չե, բառիս վատ իմաստով. վորպես անհատ՝ կուլտուրապես չի համա-

պատասխանում իր սոցիալական դիրքին. նրա հոգին և մտավոր կարողութունները խոտոր են համեմատվում իր շրջապատի, չքեզ կան կարասիքի, նույնիսկ իր հագի շորերի հետ:

Ասիական իմաստով վաշխառուն, «արշինի և կշեռքի» կեղծարարությամբ հարստացած շարչին դժվար է պատվաստվում բուրժուական բարքերին, փարթամության և «արխտոկրատիզմին»:

Զիմզիմովը կեղծիք է վոչ միայն բարոյապես, այլ և «Ֆիզիքապես» (ներկած մազերը), ինչ վոր նրան ավելի ծիծաղելի չե դարձնում: Նա չունի բուժուական դարավոր տրադիցիաները, «արխտոկրատիզմը», կոպիտ է մինչև հոգու խորքը. նրա բնազդները նախնական են. դրա համար շարունակ ստիպված է կեղծել, հարմարվելու համար նորորինակ շրջապատին:

Զիմզիմովը մի քիչ նման է Մոլլերի «քաղքենի ազնվականին»,—ասիացի շարչի վաշխառուն, վոր յերոպական բուրժուալի հովեր է առնում: Ի հարկե այս բոլորը չեն փոխում ինդրի ելութունը—շահագործման յերևույթը,—սակայն տիպերի հոգեբանության գեղարվեստական ճշտության տեսակետից մեծ նշանակութուն ունին:

Զիմզիմովի կողակից Փեփելը, տարիքով անհամապատասխան, չքավոր ընտանիքի զավակ, իր ամուսնու հարազատ արբանյակն է: Նույն պայմանագրական կեղծիքը նկատվում է և սրա մոտ: Սա չել գուրկ է «արխտոկրատական» տրադի-

ցիայից. սակայն կնոջ հատուկ բնագրական հոտա-  
ուութեամբ ավելի շուտ և հարմարվում միջավայ-  
րին, կապկուսում և արխատուկրատական ձևերը, սա-  
լոնների ետիկետը, լաքեյներ գործածելու չեղա-  
նակը...: Կեղծիք, կեղծիք սկիզբից մինչև վերջ.  
սակայն այդ կեղծիքը չերկրորդ բնութայուն և  
դարձել «Փեփեյների» համար: Այդ իրական կեղ-  
ծիք, Սունդուկյանի տաղանդի շնորհիվ, դառ-  
նում և գեղարվեստական նեմարտություն: Փեփեյը  
քաղբենի (մեղչանական) կնոջ բոլոր հատկա-  
նշական գծերը խտացնող, գերազանցորեն կեն-  
դանի և խոստուն մի տիպ և:

\*

Հիմա դառնանք պիեսի գլխավոր խնդրին, հիմ-  
նական իգեայից, ինչպես սիրում են ասել գրական  
քննադատները: «Պեպոյի» կենտրոնական գաղա-  
փարը տարբեր քննադատներ տարբեր կերպով են  
բացատրում: Առանց այն ել մեր գրական քննա-  
դատությունը շատ բիչ և զբաղվել «Պեպոյով»—  
գեթ մեզ ծանոթ չե վոչ մի կարևոր ուսումնա-  
սիրություն, բացի հատ ու կտոր հողավածներից  
պարբերական մամուլում: Սակայն և այնպես, ցարդ  
«Պեպոյի» մասին հայտնված կարծիքները հաս-  
տատում են, վոր այդ պիեսը մի գլուխ գործոց  
է, մեր գրականության գոհարներից մեկը: Այս  
միահամուռ ընդունելության պատճառը «Պեպոյի»  
գեղարվեստական անվիճելի արժեքն է: Սակայն  
գեղարվեստական արժեքը չերբեք անկախ չե իգե-  
յական արժեքից:

Մի քանի հին քննադատներ, ունենալով իգե-  
նալիստական—անհատապաշտական տեսակետ,  
Պեպոյին համարում են արդարութեան և ճշմարտ-  
ութեան գաղափարի հաղթանակի համար պայքա-  
րող ախոյան: Նրա մեջ փնտրում են պատվասի-  
րութեան, թասիբի և ասպետականութեան մար-  
մնացումը,—կարծես թե իրենց ընդունած «հավի-  
տենական» և «բացարձակ» գաղափարները թանձ-  
րացել են նրա մեջ:

Գ. Լևոնյանի «Գեղարվեստ» հանդեսի №4-ում  
(1911թ.)Վ. Տեր-Գևորգյանը, տալով «Պեպոյի» հա-  
մառոտ վերլուծությունը, պիեսի հիմնական գաղա-  
փարը գտնում է կեկեյի «սրտի անբուժելի վեր-  
բի» մեջ, և այդ համարում է Պեպոյի անհաշտ  
պայքարի շարժառիթը: Դուրս է գալիս, վոր Պե-  
պոն պատրաստ էր հաշտվելու Ջիմզիմովի հետ,  
յեթե միայն քրոջ սիրտն անբուժելի կերպով խոց-  
ված չլիներ: Ըստ յերեվոյիցին այս բավական  
խելքի մոտիկ է, քանի վոր վերջին տեսարանում  
Պեպոն, պատասխանելով Ջիմզիմովի հաշտու-  
թեան առաջարկին, ասում է— «Լավ, բարչինք,  
բաս սրա հիտ (ցույց տալով կեկեյին) վճնց իս  
բարչում»: Ինձ թվում է, վոր այստեղ չպիտի փրն-  
տուել «Պեպոյի» հիմնական գաղափարը, այլ հիմ-  
նական գաղափարի գլխավոր հենակետներից մե-  
կը—շահագործման գոհերից մեկի կենդանի ասպա-  
ցույցը:

Վ. Տեր-Գևորգյանը կարծում է նույնպես,  
վոր իր գտած հիմնական գաղափարը պիեսի մեջ

մշուշապատ ե մնում ու անորոշ, և դրա համար, նրա կարծիքով, պիեսի վերջավորութունը առկախ ե մնում և չի համապատասխանում հիմնական գաղափարին: Այս կարծիքը սխալ ե. պիեսը հանգում ե տրամաբանական վախճանին, լիովին համապատասխանելով հիմնական և կենտրոնական իդեային:

Սա ի՞նչ ե ցույց տալիս.— պարզ ե վոր պիեսի հիմնական գաղափարը կույսի սրտի անբուժելի վերքը չեր, այլապես պիեսը տարբեր վերջավորութուն կունենար և կը համապատասխաներ Վ. Տեր-Քևորգյանի գտած հիմնական իդեային: Որինակ այսպես,— կեկելը անձնասպանութուն կը գործեր և դրանով կբուժեր իր «անբուժելի վերքը», կամ մի այլ կերպ...:

Մենք տեսանք, վոր հանձինս Պեպոյի և Զիմզիմովի՝ իրար դեմ դեմի են գալիս յերկու դասակարգային հակառակորդներ, շահագործվողը և շահագործողը: Պեպոն բացարձակապես հայտարարում ե Զիմզիմովին— «Դու իմ թշնամին ես»: Այս յերկուսի միջև վոչ մի սկզբունքային և տեփական կոմպրոմիս հնարավոր չե, հակառակ դեպքում պիեսի գեղարվեստական ամբողջութունը կխախտվեր և կզանար իսկական «կոմեդիա»: Սունդուկյանի տաղանդը ըմբռնել ե այդ և չի հաշտեցրել Պեպոյին իր թշնամու հետ: Սրանով ե Պեպոյի նշանակութունը պատկառելի մեծութան հասնում: Պեպոն աչքի առաջ չունի իր միմիայն իր սեփական քրոջ անպատվութունը,

այլ հազարավոր նրա պես գոհերի, վորոնք տանջվում են Զիմզիմովիների ձեռքին:

Ի դեպ, արժե հիշել այն հանգամանքը, վոր «Պեպոյի» ամբողջ գործողութունը կատարվում ե նույն որում, մի քանի ժամվա ընթացքում: Կարելի չե յենթադրել, վոր ուշ չեր կեկելի սրտի վերքը բուժելու համար. կամ կարելի չեր համոզել խաբված աղջկան, ապացուցելով վոր նշանած յերիտասարդն իրեն չի սիրում, այլապես նա՞ ո՞րի համար չեր հրաժարվի: Այս բոլորից հետո կարելի չեր հաշտվել, ստանալ գումարը, նույնիսկ կրկնապատիկը և վրեժը լուծելու համար, կակուլիի խորհրդով, Արուսթին աղայի կողմը մի լավ կակղացնել. վերջը՝ աշխատել կեկելի համար մի սիրող ամուսին ձարել, և այլն, և այլն...: Ո՞ւր կհասնենք այսպես: Ինչու Պեպոն չի հաշտվում: Այս հարցին պատասխանելուց առաջ պետք ե տեսնել, թե ինչ՞ ե կատարվում նրա հոգում— հոտորական ձևով ասած, այնտեղ տիրում ե ցասման ալեկոծումը, արդար դայրույթի փոթորիկը, Զիմզիմովի հրեշավոր ստորութան հանդեպ: Դուցե անգիտակցորեն, բնագրի մղումով նրա մեջ կուտակվում են բոլոր ճնշվածների և շահագործվողների ատելութունը և ըմբոստացումը, սկսած փարավոնների համար բուրգեր կառուցող ստրուկից մինչև իր ժամանակակից բեռնակիր մշակը: Վերջինիս տմարդի շահագործման մի պերճախոս որինակ տալիս ե Համմալը (Գ. Սունդուկյանը) իր մեկ մալախաբի մեջ, («Մշակ» № 2. 1872):

Աղան վարձում է մի մշակ. շալակին տալիս է տասներկու փթանոց բեռը և խաբում է՝ ասելով, թե տուևը շատ մոտ է: Հսկա բեռան տակ կքած, քրտնաթոր մշակը, հետևում է շքեղ հագնված հաստափոր աղային: Գնում են, գնում են ու չեն հասնում: Համբերում է խեղճ մշակը, միամտորեն փայփայելով այն հուշար, թե աղան իրեն խղճալով խոստացված յերկու շահու փոխարեն գուցե մի աբասի վճարե: Վերջապես հասնում են աղայի ապարանքը. ծանր բեռան տակ՝ խեղճ մշակին յերկար ժամանակ դռան վրա սպասեցնելուց հետո՝ բաց են անում դարպասը: Պետք է լինում բարձրանալ յերկար սանդուխներից. մշակը իր բաղդը անիծելով համակերպվում է: Մտնում են շքեղագարդ դահլիճը. խեղճ մշակին ստիպում են պատերի տակով բալլել վոտքի ծայրերի վրա, վորպեսզի հատակի պարսկական թանգարժեք և մաքուր խալիչան չկեղտոտվի: Սակայն պատահում է սոսկալին, — ուժասպառ մշակը, չգիմանալով բեռի ծանրութան, նրա հետ միասին ամբողջ հասակով փռվում է հատակի վրա, և խալիչան կեղտոտվում է...: Աղմուկ և իրարանցում. չորս կողմից թափվում են աղախինները, լակեջները, սնակաղեղները...: Աղան կատաղում է. հայնոյանքների մի տարափ է թափում՝ մեջքը կոտրելու վտանգից հազիվ ազատված համբալի գլխին. խեղճը մի բան էլ դեռ պարտ է մնում: Վերջը՝ բարի մարգկանց միջնորդութամբ, անհիշար աղան համաձայնվում է վճարել խոս-

տացած յերկու շահին, պայմանով վոր մշակը ծառաների հետ միասին թափ տա իր կեղտոտած խալիչան...

Միթե մոտավորապես նույնը չպատահեց Պեպոյի հետ Ջիմզիմովի տանը: Նա չել գնացել էր իր իրավունքը պահանջելու, սակայն նրա հետ վարվեցին վորպես ամենահետին մուրացկանի, գողի և սրիկայի: Կարո՞ղ էր Պեպոն մոռանալ այդ և հաշտվել Ջիմզիմովի հետ: Մի կողմ թողած անձնական վիրավորանքը՝ այստեղ հանդես է գալիս դասակարգային արհամարհանքը և ատելութունը: «Դու՛ն մեր զոնաղը» — ասում է Փեփելը Պեպոյին, արհամարհանքի, նույնիսկ զզվանքի բացարձակ արտահայտութամբ, խորապես շեշտելով նրանց բաժանող սոցիալական խոր անդունդը:

Պիեսի հիմնական գաղափարը, գուցե հակառակ հեղինակի աշխարհայացքի, դասակարգային խտրութան, պաշարի և Պեպոյի արդար վրիժառութան մեջ պետք է փնտռել: Հսկա բեռան տակ կքած համբալի, կեղեքված աշխատավորի ցասումն է, վոր պոռթկում է Պեպոյի մեջ: Վերջինս «սովորական» մարդկանցից չէ, այլ հերոս՝ վոր հանդգնում է վորդորել աղաղակող անարդարութան դեմ, պատռելով շահագործողի դիմակը և ցուցց տալով արար աշխարհին նրա հրեշավոր դեմքը:

Հայացքներով չափավոր ազատական Գարբիել Սունդուկյանը, իր տաղանդի ստեղծագործական ուժի հազվագյուտ մի փայլատաակման ընդունելին, սովել է սոցիալական խորագուն չարիքը

մատնանշող, «հանրամարդկային» արժեք ունեցող գեղարվեստական հոյակապ մի յերկ—«Պեպոն», և դրանով անմահացել է հայ գրականության պատմության մեջ:

### ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ, ՐԱՖՖԻ, ՅՈՒՄԱՆՅԱՆ

(Պ. Կ. Գ. Ե. Ե. Ե. Ե.)

Գարրիել Սունդուկյանի ստեղծագործության արժեքը—վորպես հասարակական կշիռ ունեցող յերևույթ—կայանում է նրանում, վոր նա կարողացել է տալ իրականությունն որչեփով գրամասիկական հայեցողությամբ: Նրա ռեալիզմն իր դարաշրջանի համար հայ գրականության մեջ խոշոր յերևույթ էր: Հանձինս Պեպոների և Զիմզիմովիների հանդես են գալիս իրական կյանքով ապրող մարդիկ և վոչ գաղափարի սխեմաներ, այլ խոսքով խրտվիլակներ: Հեղինակը չէ խոսողն իր անձանց միջոցով, հեղինակի «չես»-ը չէ հուզվողը և բացականչողը: Սա դրամատիկական ստեղծագործության այն խոշոր նվաճումն է, վոր մենք գտնում ենք բոլոր յերկրների մեծ տաղանդների մեջ, վորոնց հատկանիշն յեղել է դրամատիկական և վոչ լիբրիկական հայեցողությունը: Յեթե մի ըոպե Սունդուկյանը «Պեպոյն» մեջ թույլ տար իր «չես»-ին գլուխ բարձրացնել՝ այդ տաղանդավոր յերկը կտապալվեր: Որինակի համար—տեսեք Լինչքան միամիտ է Պեպոն՝ Զիմզիմովի հետ իր պարտքի մասին խոսելիս, նա ասում է նրան—«չիս ասում իմ գրուստն, ելի ինձ չլիս

հավատում»: Ահա ձեզ այն «սուրբ պարզամըտությունը», անաղարտ հոգով աշխատավորի խիղճը, վոր հուզում է իր դրամատիկ խորությամբ: Գ. Սունդուկյանը չէ խոսողը, ինտելիգենտ գրողը չէ այստեղ իր լոգիկայի ուժը կիրառողը, կամ ցասումը պերճախոս բառերի հեղեղով արտահայտողը,—ինչպես Կարլ Մոորը (Շիլլերի «Ավագակներին» մեջ, կամ այլ ռոմանտիկ վողբերգությանց հերոսները),—այլ աշխատավոր դասի պարզամիտ մի ներկայացուցիչը, վորպես կոնկրետ պատկերը որչեփով իրականության և վոչ աբստրակտ հղացում «սուրբչեփով» իրականության: (Վերջին բնագավառին պատկանում են Րաֆֆու հերոսներից շատերը:) Յեթե Սունդուկյանն իր տաղանդով հակված լիներ դեպի աբստրակտ հղացումը՝ «Պեպոն», դասակարգային շահերի հակամարտության այդ ցայտուն պատկերը, կդառնար «տենդենցիոզ» է կեղծ մի յերկ:

Մենք հիշեցինք Րաֆֆուն, և յեթե համեմատենք Սունդուկյանի հետ կտեսնենք, վոր առաջինն իր գերազանց տաղանդով հանդերձ հեռու չէ որչեփով դրամատիկական հայեցողությունից. դրա համար նրան անվանում ենք ռոմանտիկ, նկատի ունենալով վոր ռեալիզմի հակառակ, ռոմանտիզմը մեծ չափով տողորված է հեղինակի «չես»-ի գեղումով: Ռոմանտիկ արվեստագետը կարծես միշտ հակամետ է դրսեվորել յերևույթների հարաբերական հատկանիշերը և վոչ հյակաճը: Այդ պատճառով չնայած ռոմանտիկների հակա պա-

Փոսին և վոզեորութեան, յերևակայութեան ուժին և արտահայտութեան եներգիւային, (այս բոլորը կա Րաֆֆու մեջ), նրանց ստեղծագործութիւնն արտահայտում է միմիայն մի եպոխայի, այն էլ նեղ հասկացողութեամբ, հոգեբանութիւնը: Րաֆֆու հերոսներն այժմ ունին գրեթե պատմական արժեք, նրանք արտահայտում են իրենց դարաշրջանի սպեցիֆիկ ձգտումներն և իդեալները. նրանք չեն կարող վոզեորվել մեզ ժամանակակից բնթերցողին: Սունդուկյանի և այլ ունալիստների յերկերը, վորոնք գերազանցորեն հատկանշվում են իրենց որբեկի գրամատիգով, կարող են համապատասխանել պատմական մեկից ավելի եպոխաների—ինչպես որինակ՝ Սոֆոկլեսի, Շեքսպիրի, Մոլիերի և այլոց յերկերը:

Ի՞նչ ենք հասկանում որբեկի գրամատիգ ստեղծ: Այս տերմինները կարող են գիտական խստագույն վերլուծութեան չդիմանալ, սակայն և այնպես յերբ որբեկի գրամատիգը հակադրում ենք սուբյեկտիվ լիրիզմին, այս յերկու հասկացողութիւնները վորոշ չափով պայծառանում են: Որբեկի գրամատիգը վերարտադրում է գեղարվեստական պատկերների միջոցով գերազանցորեն օրպական հատկանիշներ, այլ խոսքով իրերի և յերևույթների եյական հատկանիշները, ըստ թեան: Կլասիկ ունալիզմը միշտ հակված է յեղել զեպի որբեկի գրամատիգը, ինչպես Եսքիլեսը, Շեքսպիրը, Մոլիերը. իսկ ումանտիզմը՝ զեպի սուբյեկտիվ լիրիզմը, (Շիլլեր, Հյուգո, Շեկլի և այլն):

Շատ դժվար է այս յերկու ուղղութեանց միջև խիստ բաժանում կատարել և տալ ճիշտ սահմաններ, սակայն յեթե հետևենք գրական ուղղութեանց եվոլյուցիային, գանազան դարաշրջաններում գերիշխող է յեղել այդ ուղղութիւններից մեկն ու մեկը, կամ հաճախ յերկուսը միասին:

Մի շարք եպիկ բանաստեղծների մեջ մենք նկատում ենք մի տեսակ խառնուրդ մեր մասնանշած հատկութեանց: Դրանք կանգնած են յերկուսի մեջտեղը: Որինակ, մեր գրականութեան մեջ Հովհ. Թումանյանն ունի թե որբեկի գրամատիգ և թե սուբյեկտիվ լիրիզմ, վորոնց խառնուրդը կարելի յե անվանել հուզախառն եպիկ հայեցողութեան, մինչդեռ Վահան Տերյանը գերազանցորեն տոգորված է սուբյեկտիվ լիրիզմով: Արդ, յերբ Թումանյանին համեմատում ենք Րաֆֆու հետ, վորպիսի հատկանիշ ենք տալիս Րաֆֆուն: Այստեղ խնդիրը մի քիչ դժվար է: Րաֆֆին իր ստեղծագործութեան պրոցեսսի մեջ յերևան է գալիս վորպես հանճարեղ եպիկ ումանտիկ, այս հասկացողութեան լայն առումով, սակայն նրա եպիկան Թումանյանի պես թանճրացեալ չէ, դրա համար Րաֆֆուն կարելի յե համարել գեղարվեստական հաւաքեռական արժեքներ ստեղծագործող: Ավելի պարզ—Թումանյանի պոեմների մեջ մենք տեսնում ենք հայ գլուղացուն այնպես ինչպես նա յեղել է իր պատմութեան բազմաթիվ եպոխաներում—նրա դարերի ավանդական բար-

քը, տրադիցիաները, լեգենդները, սիրոյ, կյանքի  
և մահվան մասին ունեցած ըմբռնումները մենք  
տեսնում ենք, մի խոսքով, հայ գյուղացու եյա-  
կան հատկանիշը: Մինչդեռ Բաֆֆու հերոսները  
ծնունդ են միայն վորոշ եպոխայի, քաղաքական  
վորոշ պայմանների: Սրանով չենք ուզում բնավ  
ասել, վոր Թոււմանյանի հերոսներն յերևան են  
գալիս իրենց բացարձակ հատկանիշով: Մենք գի-  
տենք վոր այդ բարքը, տրադիցիաները, ալաթը  
ծնունդ են տնտեսական վորոշ պայմանների, և  
վերջին հաշվով հաւաքեալակ են: Սակայն Թու-  
մանյանը շոշափում է այնպիսի խնդիրներ, վորոնք  
համեմատական կերպով ավելի տեւական են—որի-  
նակ մարդկային սերը—և անմիջական կերպով  
չեն պայմանավորվում քաղաքական կացութեամբ:  
Բաֆֆու մեջ գերիշխում է ազգային—ազատա-  
գրական իդեալը, վորի ծնունդը պետք է փրնտ-  
ուել գլխավորապես քաղաքական պայմանների և  
ինտելիգենտ փոքրամասնութեան ուղեղների մեջ:

Վերադառնանք Սոււդուկյանին: Վո՞րն է այն  
եյական հատկանիշը, վոր կարելի չէ մատնանշել  
նրա ստեղծագործութեան մեջ: Որինակ՝ վո՞րն է  
շարժիչ գոպանակը «Պեպոյի» մեջ:—Անկասկած  
տնտեսականը և դասակարգայինը, վերջինս ավելի  
ազոտ հասկացողութեամբ: Այդ տնտեսական զրս-  
պանակը, արտահայտվելով բուրժուական սիստե-  
մի անողոք գոյութեան կովով, պատճառ է յեղել  
սոցիալական այն անհավասարութեան, վորն ունի  
դարերի պատմութիւնը: Եյական հատկանիշը նույն

ե—դասակարգային անհավասարութիւնը—սոցի-  
ալական շարիքը, վորի մի ֆազը հանդես է գա-  
լիս «Պեպոյի» մեջ: Փոխվել են «մարդը մարդուն  
շահագործելու» ձևերը, սակայն եյականը—շահա-  
գործման յերեվույթը—նույնն է մնացել և գու-  
գորդվել է կենցաղական այլ նորմաների հետ:  
Սոււդուկյանը կարողացել է նկատել սոցիալա-  
կան այդ անարդարութեան եյական հատկանիշը  
և տվել է այն՝ որչեփով գրամատիկակաճ պատկե-  
րացումով: Սոււդուկյանը դասակարգային խըտ-  
րութեան պրոբլեմը չի հասկանում այնպես ինչ-  
պես հասկանում են մարքսիստները և մյուս սո-  
ցիալիստները: Նա իր գաղափարներով իդեալիստ  
է և չափավոր ազատական, ունենալով մանր բուր-  
ժուական ինտելիգենցիային հատուկ ժողովրդա-  
սիրական ձգտումներ, բարոյական ինչ ինչ նոր-  
մաների կողմնակից: Այնուամենայնիվ, յեթե Սոււ-  
դուկյանի տաղանդը չունենար որչեփով պատ-  
կերացման հատկանիշ՝ նա ընդունակ չէր լինի  
տալ այնպիսի գլուխ գործոց, ինչպիսին է «Պե-  
պոն»: Այն պահուն, յերբ ծերունի հեղինակի  
տաղանդը կարծես ցամաքել էր, (ուղեղների մեջ  
կատարված «մուկլուլային պրոցեսին» վերաբե-  
րող մի խնդիր), և զրկվել էր որչեփով պատ-  
կերացման հատկանիշից, նրա պիեսները—որինակ  
«Սեր և Ազատութիւնը»—զրկվում են գեղար-  
վեստական արժեքից, բացառութեամբ մի քանի  
շարիխներ, վորովհետև հեղինակը գիտում է ունե-  
ցել իր լիբերալ գաղափարները քարոզելու, հե-

ռանալով որչեզեքիվ իրականության գրամատիկական հայեցողությունից և ընկնելով հրապարակախոսական իդեալական հնարավորությունների մեջ\*):

\*) **Մանրություն:** Այս հոդվածի մեջ կիրառված սահմանները կարող են վիճելի լինել շատերի համար: Ժամանակակից գրականության և արվեստի մեջ տերմինոլոգիայի և դետերմինացիայի այնպիսի խաչաթղետությունն է տիրում, վոր հաճախ դժվար է վճիտ գաղափար կազմել վորոշ հասկացողությունների և սահմանների մասին: Ինտրոյման այս ուրվագիծը մի փորձ է ավյալ հեղինակի արվեստի **գոմիեանք** (գերիշխող կողմը) գտնելու: Իացի այդ **գոմիեանքի**՝ վորևե հեղինակի ստեղծագործության մեջ կարող են լինել տարբեր **մոմիեանքեր**, վորոնք կարող են համապատասխանել արվեստի այս կամ այն ըմբռնման—Շեքսպիրի մեջ կարելի չե գտնել թե ոտմանտիզմի թե սիմվոլիզմի և թե եքսպրեսիոնիզմի սաղմերը: Ներկա չերոպական գրականության և արվեստի մեջ կան բազմաթիվ ուղղություններ, ինչպես—surréalisme (գեր-ռեալիզմ), **հեռ-կլասիցիզմ**, **հեռ-ռոմանթիզմ**, **եֆսպրեսիոնիզմ** և այլն, վորոնց տարբերությունը հաճախ տարտամ է և սոցիալական աստառն, ըստ չերևութիւն, անորոշ.—մինչդեռ խոր վերլուծությունը չերևան կհանի մի քանի ելական հատկանիշներ, վորոնք համապատասխանում են գոյություն ունեցող սոցիալական փոխ-հարաբերության և դասակարգային հոգերանություն:

## ՅԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Հայ բանաստեղծական արվեստի զարգացման նուստույն ետապը

### I

Բանաստեղծական արվեստը, ինչպես և մարդկային կուլտուրայի այլ բնագավառները կամ ճյուղերը, ունի իր պատմական բարեշրջումը կամ զարգացման պատմությունը:

Նորագույն հայ բանաստեղծական արվեստը լինելով վերջին, ժամանակից Փազն այդ զարգացման, ունի նույնպես իր ձևի պատմությունը:

Յեղիշե Չարենցը, կարելի է ասել, ամբողջապես ընդգրկում է հայ բանաստեղծության նորագույն Փազը, լինելով մեծագույն ողակը հնի և նորի միջև: Այս տեսակետից հետաքրքիր է գրտնել այն կապը, վորը միացնում է Չարենցին «նախաչարենցյան» հայ բանաստեղծական արվեստին:

Նախահոկոտեմբերյան հայ պոեզիան մեծ մասամբ տոգորված էր սիմվոլիզմով, ուներ կարկառուն վարպետներ, վորոնց կարելի չե բաժանել ձևի տեսակետից չերկու կատեգորիայի—Վերհառնյանքեր՝ Միամանթո, Վարուժան, և Վերլեյնյանքեր—

Տերյան և Մեծարենց: Արևելահայ սիմվոլիզմի վրա անժխտելի չե նույնպես ուսս սիմվոլիստներ՝ Բրյուսովի, Բայմոնտի և ուրշների ազդեցութիւնը:

Հայ սիմվոլիստները մեծ ծառայութիւն մատուցին բանաստեղծական արվեստին: Նրանք մշակեցին գրելու նոր ձև, վորոշ չափով լեզուն դարձրին «ինքնանպատակ»: Ինքնանպատակ բառը չպետք է վախեցնի—վերջի վերջո լեզուն միայն միջոց է, ինչպես գործիքներն և մեքենաները գործարանում, վորոնց կատարելագործութեան վրա հսկա աշխատանք է թափվում ամենավորակյալ բանվորների կողմից: Վահան Տերյանը այս ուղղութեամբ կատարել է մեծ և անգնահատելի աշխատանք: Մեր նոր պոետները շատ բան են նրան պարտական:

Չեի տեսակետից Սիամանթոյի ազդեցութիւնը (Վերհանի և ուրիշների ձևը) հայ նորագույն սիմվոլիստների վրա նկատելի չեր: Վեհահանյան ազատ վտանավորը, հուլգերի և հոգու անսանձ թռիչքների համապատասխան, ընդվզում եր կարծես և ուզում եր դուրս թռչել իրեն կաշկանդող եջից: Դա մի ձև եր, վոր ժխտում եր «Արվեստ Գերթողականի» կանոնները: Տերյանը սակայն չընտրեց ազատ վոսանավորը. նա հավատարիմ մնաց Վերլենի և ուսս սիմվոլիստների տրադիցիաներին: Նա աշխատեց բլուրեղացնել հայ բանաստեղծական լեզուն, զարգացնել ուրիշմը, հանգը, շեշտականութիւնը, ստեղծել հնչյունա-

կան—յերաժշտական եֆֆեկտներ և գործածել նոր և բազմազան չափեր վոշ տարերային ինտուիցիայով, այլ խորապես ուսումնասիրելով տաղաչափութեան արվեստը: Նրա բառամթերքը մնաց ժառանգութիւնն նոր սերնդին. ինչպես—ուրու, մուժ, նայիրի, կիզել, նիշված, գազել, կարուսել և այլն բազմաթիւ բառեր, վորոնք այժմ սովորական են, մինչդեռ Տերյանից առաջ գրեթե նրանց վոշ վոր չեր գործածում:

Անկասկած սկզբում Չարենցը յերգել է Տերյանի և այլ սիմվոլիստների հետևողութեամբ. դա նախահոկտեմբերյան անել թախիծի և տրտմութեան շրջանն եր: Հաճախ «սովորական» ընթերցողի համար դժվար եր զանազանել Չարենցը Տերյանից նույնիսկ Արմենուհի Տիգրանյանից կամ Վարսենիկ Աղասյանից, նրանց մոտիվների և ձևերի գրեթե նույնութեան պատճառով: Սակայն վորպիսի հեղաշրջում մենք նկատում ենք Հոկտեմբերյան հեղափոխութիւնից հետո Չարենցի մեջ: Այգ հեղաշրջումը շարտահայտվեց Փուտուրիզմով (մի ուղղութիւն վոր դեռ հեղափոխութիւնից առաջ նկատել եր ուսսական գրականութեան մեջ և չգիտենք բարբաղդաբար թե զրժբախտաբար արձագանք չեր գտել հայ բանաստեղծների մոտ, յեթե չհաշվենք կարա-Դերվիշի տոնավաճառային ճամարտակութիւնները): Հեղափոխութեան պաֆոսն իր հետ բերավ բանաստեղծութեան մեջ յուրատեսակ ուժանտիզմ, վորը բոլորովին նման չե 19-րդ դարու սկզբի

բուրժուական ոտմանտիզմին և չպետք է շփոթել նրա հետ— ոտմանտիզմ տերմինը գործ ենք ածուծ նրանից ավելի հարմարը չունենալու պատճառով:

Հետաքրքիր կլինի զուգադրել յերկու կառույններ գրեթե նույն չափով, ութմով, արտաքին ձևով գրված, մեկը Տերյանից (նախահոկտեմբերյան) մյուսը Չարենցից (յետ-հոկտեմբերյան)—

#### (Տերյան)

Յես լալիս եյի,  
 Բայց ոտարի պես եյի ունկընդրում  
 Ինքս իմ հոգուն, ինքս իմ լացին  
 Ու մութ եր շուրջս և խավար անհուն—  
 Իմ խարված սրտում մթամած գիշեր,  
 Յեվ պաղ և ծանր, ծանր վորպես քար  
 Յեվ տաղտկությամբ լի և անվերջ յերկար  
 Անծիր ու անհուն—  
 Ու վոչ մի հեռվում լույս չեյի փնտռում...  
 Յեվ համբ եր ընդմիշտ աշխարհն ինձ համար—  
 Յեվ ոտար և մութ,—  
 Յես ընկած եյի անզոր ու մալոր  
 Յեվ հավետ մենակ և անդարձ մենակ...

#### (Չարենց)

Յերգում ե հոգիս—հրեղեն, հնչում,  
 Գիտեմ այսորվա իմ յերգի առաջ—  
 Իմ հոգու կարմիր կայծերի հանգեպ—  
 Ռադիո-կայան ե ամեն մի հոգի  
 Ուր ել նա լինի,

Ամեն մի հոգի, վոր ապրում ե, կա  
 Յեվ կրում ե իր թևերի վրա  
 Նույն խորհուրդը մեծ, խորհուրդը հսկա  
 Որերի այս վառ,  
 Այս վառ որերի խորհուրդը պայծառ  
 Ամեն մի հոգի,  
 Վոր իր յերկաթե թևերով այսոր  
 Չնգում ե շաչում  
 Յեվ փնտռում ե նոր հանգիստ ու որոր  
 Միլիոն թևերի ըմբոստ շառաչում...

Վերլուծության հաղիվ թե կարիք լինի—  
 հակադրությունը պարզ ե: Հեղափոխության հզոր  
 թափը ազատագրել ե Չարենցին մեղուիական  
 թախիծի անել ցանցից, մոայլ ու գունատ ա-  
 ոտրիայից, վորին նա արձագանքել եր նման տո-  
 դերով—

Բայց շուրջս այնպես գունատ եր, տկար,—  
 Խոսքեր չկային ու արև չկար...

Սակայն Չարենցը արվեստի տեսակետից  
 մի խոշոր քաջ առաջ գնաց, Վերլեն-Տերյանից  
 դեպի Վերհառնը և այլ ազատ-վոսաճավորի վար-  
 պետները: Բայց մինչ այդ ձևի տեսակետից նա  
 տվավ մի սինթեզ,—հանձինս «Ամբոխները Խե-  
 լագարվածի», հայկական տաղաչափությամբ յեր-  
 գեց պրոլետարական հեղափոխությունը: Այստեղ  
 մենք հարկ ենք համարում զգուշացնել ընթերցո-  
 ղին, վոր առավելապես մենք այս ուսումնասիրու-  
 թյան մեջ զբաղվելու չենք արվեստի և ձևական



Իրենց վայրենի վախն են մոռնում  
Աշխարհովը մեկ,  
Վախը վայրենի, վոր հնչում է մեր  
Բոլոր սրտերում, վորպես հաղթութեան  
ու փառքի մի լերգ:

«Ռազիո պոեմները» կազմում են անցման  
ողակը հին ու նոր ձևի միջև, նոր ձևը լինելով  
լեֆո—ֆուտուրիստական թեքումը, վորի մասին  
հետո կխոսենք:

Զնայած վոր այս պոեմները (վոչ եպիկական)  
«մարգարեյական» ուժեղ ու ցնցող խոսքեր են  
չպրաված բոլորին, բոլորին, ձգտելով դեպի մաս-  
սայական տարածականութունը, այնուամենայ-  
նիվ կրում են իրենց վրա ֆուտուրիստական  
մեծախոսութեան հետքերը, սուբյեկտիվ—անհա-  
տապաշտ տարրը: Բանաստեղծն ինքն իրեն անվա-  
նում է «նայիրցի հսկա պոետ», «անհուն պոետ»  
չևայն: Միայն վերջին պոեմը դառնում է ավելի  
տարածական, իր ընդհանուր շրջագծով մասսա-  
յական:

Ինչպես ասացինք, ձևի տեսակետից «Ռազիո  
Պոեմները» համարիա պատկանում են «հին» չափն  
անխախտ է, սակայն հատվելով խուսափել է մո-  
նոտոն լինելուց: Այս ձևը մասամբ գործ են ածել  
թումանյանը և Տերչանը («Հին որհնութուն», և  
«Հատված»): Սակայն Չարենցի մոտ այս ձևը  
միանալով հեղափոխական բովանդակության հետ  
կարծես բոլորովին կերպարանափոխվում է. ըզ-  
րում ես ինչ վոր բան այդ պոեմների ձևի մեջ

նոր է ու հզոր, նոր վոճ, հեղափոխական ստիչ  
ստեղծելու ձգտումը: Այդ պոեմները կարգալիս  
հիշում եք Ուրիթմենին և Վեռնանին, վոճը բար-  
ձր է, բայց բարեբաղդաբար վոչ կեղծ, ինչ վոր  
բացադրվում է բանաստեղծի տաղանդով, վորն  
ազատում է նրան շաբլոնից և ցուցադրում է  
ներքին ուժեղ հույզի ինքնատիպ մարմնավորումը:

## III

## „Ա Մ Ե Ն Ա Պ Ո Ե Մ“

Հանրածանոթ «Ամենապոեմը» հայ պոեզիայի  
մեջ իր արտաքին ձևով նորութուն է. նրա խուզ-  
ված չափը, կոտորակված սողերը կարող են  
խրաչեցնել «չարքալին» ընթերցողին, վորը՝ չկա-  
րողանալով հետևել վոտանավորի ներքին ռիթ-  
մականութեան, կարդում է կից-կտուր ֆուզներ  
և ստանում վոչ բաճասեղծակաճ սպավորություն:  
Անշուշտ չպետք է մեղադրել նման ընթերցող-  
ներին, վորոնք ցանկանում են ստանալ լրացած  
զգացութուններ, քանի վոր եքսպերիմենտալ  
հոգեբանութունն ապացուցում է, վոր անհամա-  
չափ և անհավասար քանակութուններ և տպա-  
վորութուններ ըմբռնելու համար հարկավոր է  
մեծ ենթագիայի ծախսում: Սակայն ուշադիր ըն-  
թերցումը, պահելով չափի հաջորդականութունը՝  
ցույց կտա, վոր ըստ լերևույթին անկապ ու կից-  
կտուր սողերն ունին ներքին ամուր ռիթմիկա:

Պոեմի արտաքին այս ձևը բացասում է վոտ-  
ների և սողերի դասավորության կլասիկ որի-

նապահությունը, բայց չերբեք չի խախտում բնական չափի որիննապահությունը: Բանաստեղծը, ցանկանալով հետևել ֆուտուրիստներին, փորձել է կոստել ուրիշ բանագրոսիկ կերպով, և չի հաջողել, ինչպես վոր չի կարելի ստիպել սրտին, վոր այլ կերպ բաբախե: Այժմ ապացուցելու համար վոր ուրիշ խախտում չկա, կարելի չե միացնել կոտորակված տողերը և ամբողջական սրտը րոֆներ կազմել, լիովին համաձայն դասական տաղաչափության:

Վերջները ութ կոտորակված տողեր և կազմենք չորս տողանի կանոնավոր յերկանդամ տողերից բաղկացած տուն.—

Դարերի / մշուշից չեկած,  
Ձեռքին / հնամյա մի նեխ—  
Դարերի / մշուշի վրա  
Գրում եր / վեց վիլայեթ:

Ուրիշ որիննակ—ութ տողը վերածված չորս յեռանդամ տողերի:

Գալիս եր / Բերլինից / Փարիզից,  
Գալիս եր / մոսկովից / դեղին,  
Անցնում եր / Նայբի / վրայից,  
Բռնել եր / Բաղդադի / ուղին:

Չափերը—ամֆիբրար, անապետ և յամբ, հանգերը՝ աբաբ:

Մի վերջին պերճախոս որիննակ ևս: Վերջները 22 կոտորակված տողեր և վերածենք չեն-

թաղրական կանոնավոր ստրոֆի, կտախանք Էրոսական չափով հավասար տողեր, կանոնավոր հինգվանկանի անդամներով:

Յեզ աչապես չեկան / չեկան դեմ դեմի,  
Բանակներ բազում / և բազմամիլիոն,  
Յեկան Բաղդադից / Բերլին, Պերեմիշ,  
Բերլինից—Կալե / Դուվր, Վերգեն, Լիոն...  
Աշխարհից—աշխարհ, / ծովից—ծով չեկան,  
Նիւ-Յորքից—Պեքին / Ուրալից—Միլան...

Մենք հատկապես հրաժարվեցինք մեջ բերելուց բնագիրը իր որիզինալ ձևով—վախենալով վոր դա կգրավեր մի ամբողջ եջ—թողնելով ընթերցողին անձամբ ստուգել բնագիրը:

#### IV.

### ՅԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ ՅԵՎ ՖՈՒՏՈՒՐԻՍՏԸ\*)

«Ամենապոեմի» արտաքին ձևի նմանութունը Մայակովսկու և ֆուտուրիստների գործ դրած ձևի հետ յերևութական ե: «Ամենապոեմի» մեջ Չաբենցը բնավ ֆուտուրիստ չե, բառախաղությամբ և կալամբուրներով չի զբաղվում և չի խորտակում տաղաչափական տրադիցիաները: Նա պատ-

\*) Ծանոթ. Ինչ վերաբերում և ֆուտուրիստների ստաջ բերած գրական-գեղարվեստական շարժման սոցիալ-դասակարգային աստառին, վորի մասին շատ և խոսվել թե ևորհ. Ռուսաստանում և թե մեզ մոտ, հարկ ենք համարում մեջ բերել մարքսիստ քննադատ Գ. Գորաչյովի կարծիքը, վորն ասում ե—«Ֆուտուրիստ-

մում ե, բառ չի կերտում. «բառը» նրա համար ինքնանպատակ չե—ճիշտ ե վորոշ ֆոնետիկ «պրի-յոմներ» կիրառում ե, ինչպես—

Սաղաղ—խաղող—քաղաք

ինչ վոր շատ հեշտությամբ կարելի չե ըմբռնել վորպես—խաղողի խաղաղ քաղաք—Յերևանի ճիշտ բնորոշումը, իգեական վոչ հնչյունական պատկերով:

Ելխենբաումը ասում ե, վոր սկզբնական շքր-ջանի ֆուտուրիստները ցանկանում ելին ապշեցուցիչ տպավորություն գործել անմիտ բառակերտությամբ, կոպիտ մետաֆորներով և բոլոր տեսակի հեղինակությանց վրա գրոհ տալով: Կասկած չկա վոր Չարենցը վորոշ չափով տար-

ները չեն իգեալականացրել մանր բուրժուական կենցաղը. վորպես անկասկած ինտելիգենտներ՝ չեն չեղել ներկայացուցիչները վորոշ տնտեսական բազա ունեցող շահագործված դասակարգերից մեկնու մեկի, վոչ պրոլետարիատի, վոչ գյուղացիության, վոչ ել քաղաքային տնտեսությամբ զբաղվող մանր բուրժուազիայի: Ուրեմն, նշանակում ե նրանք խոսում են միայն իրենց անունից, քաղաքային ինտելիգենցիայի անունից, չունենալով փոքր ի շատե ապահովված դրուժյուն բուրժուական աշխարհում, ոտար նրա արտադրական սիստեմին, չարացած անճար լլումպեն-ինտելիգենտներ: Նրանք գնացին ընդվզման և բացասման ճանապարհով, և զարձան «հեղափոխական խոսքի ֆանատիկներ» կամ «բառի հեղափոխականներ»: „Очерки современной русской литературы“ Георгий Горбачев, Гусиздат, Москва 1925 г, էջ 134. 135:

վել ե այդ մոդալով, բայց չի զոհել իղեան ձեվական տարրին:

Չարենցը նմանվում ե Մայակովսկուն այն չափով ինչ չափով նրա նման չերզել ե սոցիալական—հեղափոխական մոտիվներ, հաճախ նույն թեմաներ ընտրելով, հիշել ե գնդապետ Գայլիֆելին, Վիլսոնին ևայլն:

Մայակովսկու ձեն ազդել ե Չարենցի վրա. չերբեմն այնքան խորն ե թվում այդ ազդեցությունը, վոր մեկին կարողալով հիշում ես մյուսին. հաճախ հանդիպում ես գրեթե նման արտահայտությունների, ինչպես՝ ГНИЕТ ЗЕМЛЯ\*) «աշխարհը նեխած մի դիակ»: Սակայն խորքում այս չերկու պոետները տեմպերամենտով իրարուց շատ տարբեր են. նրանց միացնողը հին արվեստին նորը հակադրելու ձգտումն ե—հաղթահարելու հին պոեզիական մելոդիան, մաքսիմալ չափով վոտանալորը մոտեցնելու խոսակցական և հոետորական լեզվին—ինչպես ասում ե Գ. Գորբաչյովը: Չարենցը, համակրելով բանաստեղծական արվեստի մեջ ֆուտուրիստների կատարած հեղաշրջման, նմանվել ե նրանց, սակայն մեր գրական միջավայրը թելադրել ե մեղմացուցիչ նախազգուշացում գրական այդ աճախիսակաճ տենդենցների դեմ: Հայ պոետները ողավեցին միայն ֆուտուրիզմի նոր և մեղմացած, «տպագրու-

\*) Մանոբ. Մայակովսկու „Война и Мир“: Չարենցի «Ամենապոեմ»:

թյունից» Մենք չենք ունեցել խլերնիկոզների, համենակու, հրուշոնիխների նման ազատ բռնակեցողներ, վորոնք նման տողեր ճորինեցին, ինչպես—

„О, рассмейтесь, смеячи!

О, засмейтесь, смеячи!

Что смеются смехами, что смеяшствуют  
смеяльно,

О, засмейтесь усмеяльно

О, рассмейся надсмеяльно, смех усмейных  
смеячей!

О, несмейся рассмеяльно, смех надсмейных  
смеячей!

(Хлебников).

Այս տողերը հայտնի չեն ուրև. նորագույն պոեզիայի մեջ. նույն Գորբաչովը ասում է, վոր նույնիսկ ամենազգվարահաճ քննադատները համարում են հետաքրքիր նվաճում:

Չարենցին պարփակել մի հատուկ շկուպի մեջ չի կարելի. նա հիշեցնում է և՛ Փուտուրիստներին և՛ Թումանյանին և՛ իմաժինիստներին:

\* \*  
\*

Այժմ մի քանի խոսք Փուտուրիզմին ավելի մոտ թվացող «Պոեզոգուանայի» և «Ռումանս Անսերի» մասին: Այս չերկու պոեմներն իրենց ձևով դարձ են դեպի նախահոկտեմբերյան Մայակովսկու Փուտուրիզմը: Հայ պոեզիայի համար սա չափած մի ընդվզում եր արվեստի բոլոր տրագի-

ցիաների դեմ—կուպիտ մետաֆորներ, արտաուց հիպերբոլներ, իմաժինիզմ, — այն բոլոր «մոդեռնիստական» արսենալը, վորով Փուտուրիստները ուժակոծում ելին հիս արվեստը, նրա սիմվոլիստական միտաիցիզմը և նրբին հույզեր մարմնավորող չերաժշտականությունը: Անկասկած, այս չերկու պոեմների մեջ ձևական նվաճումներ կան: Ինչպես վոր Մայակովսկին հաղթահարեց ուրև բանաստեղծության մեյոդիական սիմվոլիզմը՝ նույնը մասամբ կատարեց Չարենցը հայ պոեզիայի մեջ: Չենք խոսում այդ պոեմների հասարակական արժեքի մասին, վորը կարող են վիճելի կամ բացասական համարել, սակայն մեզ թվում է, վոր արվեստի ասպարեզում նրանք վորոշ չափով ըզգաստացնող մտրակի ազդեցութուն գործեցին: Հայ պոեզիայի եվոլյուցիայի համար այդ պոեմների չերևան գալը անհրաժեշտութուն էր: Հատկանշականն այն է, վոր Չարենցը չի չերզել հեղափոխութունը Փուտուրիստական Փորմալով (ամենապոեմի Փուտուրիստական ձևը չերևութական է). հայ պոեզիայի մեջ Փուտուրիզմը չերևան չեկավ ՆեՊ-ի շրջանում, այն ել վոշ վորպես կազմակերպված ուղղութուն կամ գալրոց: Չարենցից հետո՝ Փուտուրիստական ձևական նրվաճումներից ոգավեցին հայ պրոլետ—պոետներ՝ Ա. Վշտունի, Ն. Չարյան և այլն, ինչպես Բեզիմենսկին ինքն. Ռուսաստանում: Յեղիշե Չարենցի փորձերը՝ Փուտուրիզմը պատվաստելու մեր իրականության՝ ֆիասկո կրեցին:

## V.

## „ԱՍՊԵՏԱԿԱՆ“

(Նեո-ոսմասիզմ)

«Պոեզոգուանայի» և «Ռոմանոս Անսերի» մեջ Չարենցը ապրել է ստեղծագործական կրիզիս, անխուսափելի մի բեկում, նոր ձևեր վորոնելու ընթացքում: Այդ պրոցեսի արդյունքն է «Ասպետականը»:— Ի՞նչպիսի արդյունք է նեո-ոսմանտիկ «Ասպետական»-ը ֆուտուրո-իմաժինիստական «Պոեզոգուանայի» կամ «Ռոմանոս Անսերի»: Հենց հարցը դրանումն է: Նեղ գոգմատիզմի «ակնոցներով» չի կարելի վճռել այդ խնդիրը: Փաստն այն է վոր Չարենցը այդ շրջանում ապրում էր մի յերկունք, նրա մեջ կատարվում էր ստեղծագործական խմորում: Բանաստեղծը հրաժարվելով «հին» ձևերից չէր գտնում «նորը», նրա մեջ կատարվում էր, այսպես ասած, նոր ձև գտնելու «տրագեդիա»: Փոխվել է շրջապատը, նոր կենցաղի հիմքերն են դրվում, նոր բովանդակությունը պահանջում է նոր Յուրա, շարունակ սպանիչ է:

Նման վորոնումների մեջ հանձարն անպատկարոզ է մոլորվել, վորովհետև անհասանելի չեն վոր նվիրագործում են նոր ձևը, նոր ստիլը— դասերունդների գործ է.— չենք ասում ստեղծել, այլ նվիրագործել, վորովհետև վերջիվերջո անհասանելի են ստեղծողները, այնուամենայնիվ

ստիլը հասարակական յերևութ է, իսկ դասակարգերի բաժանված հասարակութան մեջ՝ դասակարգային:

Քիչ առաջ հիշեցինք «Ասպետական» ոսպսոգիա անվանված պոեմ-բալլադը, և հարցրինք թե վորպիսի ստեղծագործական ճգնաժամի արդյունք է: Արդարև, կարդալով այդ «միջնադարյան» ձևի բալլադը կարելի չէ դարմանալ, վոր մեր որերում՝ պոետը սիրտ է արել դառնալ խաչակրաց ժամանակի մի տրուբադուր, և յերգել «մահացու հարվածը իր տեգի»: Սակայն չեթե ընդունենք վերոհիշյալ յենթադրությունը բանաստեղծի ապրած «տրագեդիայի» մասին՝ ապա կարող ենք յեղրակացնել, վոր այդ «տրագեդիան» արտահայտվեց «Ասպետական»-ով, կրելով մի տեսակ սուբլիմացիա (վսեմացում): Սա կարող ենք համարել յուրատեսակ ռեակցիա (հոգեբանական տերմինի առումով) բանաստեղծի ստեղծագործական պրոցեսի մեջ, վորն արտահայտվեց հոգեբանական կոնտրաստով,— խաչակիր ասպետը յերևան յեկավ Հոկտեմբերյան հեղափոխություն քաղաքացիական կռիվներին մասնակցած կարմիր պոետի մեջ: Այնուամենայնիվ, «Ասպետականը» արվեստի տեսակետից խոշոր նվաճում է, ունի ներքին գեղարվեստական միություն, եպիտետներն ու մետաֆորները նոր են և հաճախ անակնկալ: Սակայն նկատվում է ինչ վոր ներվալին անհանգստություն, վորը հասնում է մինչև «փշաքաղությունը»: Այս հանգամանքը կարելի

յն բացառրել պոեմի գերազանցորեն սուբյեկտիվ բնույթով, հեղինակի սեփական սուբյեկտիվ թյանց և եմոցիաների բուռն զեղումով, կրքի սարսուզին և արտառոց սուբլիմացիայով, վորին ընդունակ է միայն նեո-ռոմանտիզմը վորպես գեկագեցոսի անմիջական հաջորդը կամ ուղեկիցը...

«Ասպետականի» արվեստը մենք համարեցինք նեո-ռոմանտիկական և մեզ թվում է վոր իրավունք ունենք: Ռոմանտիկներն նույնպես հասան մինչև միջին դարը, դղչակները, և գոթական վոճը (Վիկտոր Հյուգոյի «Նոար-Դամը»): Տարբերությունն այն է, վոր Չարենցի նեո-ռոմանտիզմը ավելի շղային է, սիմվոլիզմի արդյունք, այլ խոսքով ժամանակակից կապիտալիստական ներվային կենցաղի արդասիքը, մինչդեռ ռոմանտիզմը արդյունք էր կամ հակազգեցությունը անդորր կլասիցիզմի խստաբարո տրագիցիաների: Վիկտոր Հյուգոյի ռոմանտիզմը չերբեք չհասավ խստերիկ շղաձգումների, պարտված խաչակիրտրուբազուրի սեվ ամոթին: Կերջին բառերը «Ասպետականի»-ից են:

Յեւ հիմա հոգնած մի տրուբադուր,  
Որերի անգուշն ճամբերին,  
Յերգում եմ հարվածը հատու  
Մահացու հարվածը իմ տեղի:

Յերգում եմ կարոտն իմ արթուն,  
Յերգում եմ ամոթն այն սե,  
Վոր կարող և գարձնել մարդուն  
Գիտնահար սովեր մի նսեմ:

Ել չենք ասում, վոր այդ կարոտն ընդունակ է չեղել վոչ միայն «գեոնահար մի սովեր» դարձնելու մարդուն, այլ և հավասարեցնելու մի իմաստուն կենդանու, վորի անունը չգիտես ինչու նշավակություն սիմվոլ է դարձել: Այդ իմաստուն կենդանին շունն է — փնտրել «Ասպետականի»-ի մեջ:

«Ասպետականի»-ի արտաքին ձևը համապատասխանում է բովանդակության: Գրված է ութտողանի կանոնավոր ստրոֆներով. ըստ երևույթին պահված են «Արվեստ Փերթոդականի» որենքները, միակ տարբերությունն անհավասար չափերն են և աստիճանները, վորոնք, իրավ վոր, պոեմի չերաժշտականությունը դարձնում են «ռապսոդիական», անհանգիստ հոգու և ներվային տրամադրություն արտահայտություն —

Հոգնած ու թնւլ | մի խաչակիր  
Յեւ մի սր | այն դղչակ/կը մտն,  
Ասպետի | լաթեր էր հագիս,  
Չրահներս | ժանգոտ ու թնց:

Յեւ դառնում | ելի սուրբ | քաղաքից  
Յեվ սրտիս | թաղուհուն նվեր,  
Յեւ տանում | ելի ցա/վը վերքիս  
Ու կարոտս | բարձր ու վեհ:

Այս ստրոֆի չափերը գլխավորաբար չամբ են և անհավասար, անդամները վանկերով անհավասար են, բայց շեղաված են միշտ անդամի վերջին վանկի վրա, այս պարագան վորոշ չափավ պահպանում է սիմետրիկ կանոնավոր բախման տպավորությունը և վոտանավորը դարձնում է սիմետրիկ

յերաժշտական, վորը կարող ենք ասել նորութիւնն ե հայ բանաստեղծական արվեստի մեջ: Չափի այս զգացումը, ավելի բազմազան և եֆֆեկտավոր, յերեվան ե գալիս «Ստամբոլ»-ի մեջ:

Չարենցը, 1922 թվին, «Նորք»-ում տպած ունի մի բանաստեղծութիւն՝ «Քամի» խորագրով, գրված ամբողջապես վերհարնի հետևողութիւնով և Սիամանթոյի ստիլով. հատկանշական են այդ բանաստեղծութիւնի հետեյալ տողերը, «այլքսանդրյան» չափով, վեցվանկանի ցեղութեամբ, հատուկ ֆրանսիական տաղաչափութիւն—

Ո, գթացեք հիմա / այս ծառերին հիվանդ,

Ո, գթացեք այս սև / հոգևարքի ժամին...

Այս պոեմի մեջ հանդիպում ենք եղգար Պոյի «Ազգավր» հիշեցնող հետևյալ բառերին, վորոնք արտասանվում են, ազգավր փոխարեն, քամու կողմից—

Յերբեք...

Յերբեք...

Յերբեք...

Մուսսլ, հուսահատական այս ճիշերը մեր կարծիքով ավելի ձևական նշանակութիւն ունին, վորպես պատրաստի սիմվոլներ—արտահայտութիւն ուժը սաստակացնելու եքսպրեսիոնիստական պրիոմ...:

Ձևի վորպիսի բազմազանութիւնն...

Չարենցի չուրահատուկ տաղանդն իր ստեղծագործական ուժեղ թափի հետ միասին ոժտված

ե բանաստեղծական արվեստի բոլոր հնարավոր անցյալ և ներկա ձևերը բաղադրելու կարողութիւնով: Նա փորձել ե բոլոր մեծ վարպետների ձևերը, հարմարեցրել ե իր տեմպերամենտին, և կերտել ե հաջողված կտորներ: Այս յերևույթը չափազանց նշանակալից ե մեր բանաստեղծական արվեստի զարգացման պատմութիւնի մեջ. վոչ մեկը մեր բանաստեղծներից ընդունակ չի յեղել յերգելու այդքան բազմազան ձևերով, վոչ թումանյանը, վոչ Իսահակյան, վոչ ել Տերչանը:

Դժվար ե մի խոսքով բնորոշել Չարենցի արվեստը վորպես ամբողջութիւն, գտնել նրա ստիլի հիմնական մոմենտը և անվանել միանգամից սիմվոլիստ, ռոմանտիկ, իմպրեսիոնիստ, եքսպրեսիոնիստ կամ ֆուտուրիստ: Սակայն և այնպես այդ արվեստը անբնորոշելի չե, ավելի ժամանակ և ավելի մանրակրկիտ ուսումնասիրութիւն կարող են յերևան բերել այդ հիմնական մոմենտը,—մնաց վոր, Չարենցը դեռ ապրում ե ձևեր վորոնելու շրջանը, նրա ստեղծագործական ճգնաժամը դեռ չի վերջացել:

## VI.

### „Ս Ս Ա Մ Բ Ո Լ“

«Ասպետական»-ից հետո ձևի տեսակետից նույնպես խոշոր նվաճում ե «Ստամբոլը»: Այստեղ ուրիշիկան ավելի բազմազան ե, սիմվոլիզմ\* յերաժշտականութիւնը, ալլիտերացիան, աս-

\* Պետք ե ասել, վոր չափական այս ձևը բարդ

տոնանալ հասած են կատարելության: Աչքի չե  
զարնում չափի որիզինալությունը, ամֆիթերաքով  
և անապետով խառն—

Բայց հանգիստ են դուրսը, դռանը  
Կանգնած ե վոստիկանը հլո՛ւ,  
Ղրկել ե Մուստաֆան Բեմալը,  
Եֆենդո՛ւ հանգիստը հսկելո՛ւ:

Վանկերը հավասար թվով են, սակայն շեշտերի  
հաջորդականությունը անկանոն ե, բացի վերջին  
վտաներից, վորոնք զույգ արական և իգական  
հանգերով, շեշտով ու չափով զուգադիպում են:

Հաջող աստոնանաներով և ուրիշով աչքի չեն  
ընկնում հետևյալ տողերը—

Մի հնդիկ / կառնե պալտոդ,  
Մի խափշիկ / գլխարկդ, թե կուզես  
Կմանես: / Յերկնային մի հոտ  
Զմայված / հոգիդ կը հուզես:

Ռիթմի որիզինալությունը կայանում ե նրա-  
նում, վոր վանկերի թվով անհավասար անդամ-  
ները, իրենց վերջին վանկի վրա շեշտվելով, ստեղ-  
ծում են չերաժշտական եֆֆեկտ և տոնական  
տրամադրություն:

Քողադոտ և անապետա խառն չափերով ե  
հյուսված հետևյալ տունը, զույգ իգական և արա-

և և հիշեցնում ե հին հայկական չափը, վորի հիմքն ե  
կազմում ամառակը. տարբերությունը՝ անհավասար  
քանակությամբ անդամներն են:

կան աստոնանա-հանգերով. այստեղ ուրիշն այլ  
կերպ ե. տողերը վանկերի թվով իրար հավասար  
են, սակայն շեշտերի հաջորդականությունը ան-  
կանոն ե. այս վերջին հանգամանքը նպաստում  
ե ներքին դինամիկային, արձակ-հոեստորական  
եֆֆեկտով:

Ես բոլորը ճիշտ ե, ի հարկե  
Ես բոլորը հզոր ե ու նոր  
Բայց նո՛ւյնն ե չերկրի վերնահա՛րկը  
Վոր կոչվո՛ւմ ե Պոլիս, Ստամբոլ:

«Ստամբոլը» իր տեսակի մեջ (ազիտակա) մի  
գլուխ գործոց ե հայ նորագույն պոեզիայի մեջ,  
արվեստը հասել ե կատարելության: Բանաստեղ-  
ծը տալիս ե ձևական ապշեցուցիչ եֆֆեկտներ,  
ջազբանք և ճախարհը պատկերելիս՝ ուրիշն ստա-  
նում և նեղրական մուզիկայի սինկոպային բա-  
խումբ: Պոեմը ունի ուժեղ հակադրությանց նը-  
մուշներ—

Հրճվել ե թաքսիմի սինեման,  
Թոքատլյանը, Սուլեյմանի չեռուն—  
Իսկ ենտեղ քսան խնդրաման  
որորվել են սե ջրերում...

Ինչ հեշտ ե բարձրացել եղ որը  
Եֆենդու «պա՛ն» ֆոքստրոտում...

Ու կիները,  
կիները,

ոիժ կինները...  
Ռուս կինները բոլորը պրինցուհի,  
թեկուզ թանգ են... գնեքը,  
բայց արյունը կապույտ է ու հին՝

Ո, յեթե տեսնեցին նրանք,  
վոր աչքերը շինած

ավին—

անկյունից նայում է իրանց

մի կարմիր—

խակական բաշխիկ՝

\* \* \*

Չարենցի արվեստն ունի բազմազան և բազմաթիվ ռեսուրսներ, վորից ոգտվելով նա կարողանում է հասկանալի ձևեր գտնել թե «մաճկալ Սաքույի», թե «պրոլետա Համբույի» և թե «գտարյուն եստետի» համար: Համեմատելով Տերյանի արվեստի հետ՝ սա հսկա առաջադիմություն է: Չարենցի արվեստը ունի բոլոր տվյալները համարվելու հայ պոեզիայի նոր և նշանակալից ետապը, վորը բնորոշում է բանաստեղծության այդ ամբողջ նորագույն եպոխան: Չարենցը ունեցել է և ունի բազմաթիվ հետևողներ, սակայն կան նաև նրա ազդեցությունից ազատ սակավաթիվ բանաստեղծներ (ինչպես Վեսպերը), վորոնց արվեստը բնորոշվում է մի քիչ այլ հանգամանքներով, որինակ՝ Վեսպերի արվեստը հետաքրքիր է վորպես որիզինալ բազադրություն և արժանի յե լուրջ ուշադրություն:

Փրանսիացի նշանավոր քննադատ Գ. Լանսոնը, իր մեկ աշխատություն մեջ խոսելով պրոզայի արվեստի մասին՝ գտնում է, վոր գրականություն պատմություն ընթացքում իսկական արվեստագետների կողքին յեղել են և կեղծերը— ստեղծվել են կեղծ ստիլներ, ինչպես Կայսերական Կեղծ Վոճը, վորով նապոլեոնը արտասանում էր իր ճառերը, կային: Սակայն պոեզայի մեջ յնդիրը մի քիչ այլ է: Արձակը կարող է վորոշ չափով զուրկ լինել ութմից, պատկերավորությունից և արվեստի այլ պահանջներից, սակայն ունենալ ուժեղ և անխորտակելի լոգիկա կամ պատմելու մեծ վարպետություն, ինչպես Դեկարտի վեճը կամ Բալզակի լեզուն: Մինչդեռ առանց գեղարվեստական մի շարք տվյալների պոեզիան կորցնում է իր արժեքի մեծագույն մասը, նույնիսկ յեթե իդեական մի գոհար լինի:

Չարենցը գործ է ածում հաճախ խոսակցական պրոզայի արտահայտություններ, ինչպես— աչխնքն, ի հարկե, հասկանում ես, եստեղ ես հասցրե, ռեխ, դուում, քիթ, կային: Բայց բանն այն է վոր այդ պրոզայի բառերին պետք է տալ մի այնպիսի ութմ, վոր նրանց ներքին իմաստը շարժման և ժեստի փոխվի, և գտնի բանաստեղծական զուրկության իրավունքը— մեծավ մասամբ Չարենցին հաջողվում է այդ:

Վերցնենք մի քանի տող Աբովի մի վոտանավորից, տպված «Նոր Ակոսում» (1924 թ. ոգոստոսի 10):—

Քանը տապալել ենք,  
դառնում ենք աները,  
Իստնում ենք հաղթ ու առողջ—

Նկատեցեք «առողջ» պրոգնոզիկ բառ, վերալիսի զարգացում «հաղթ» դժոխարի:

Մի այլ որինակ նույն տեղից՝

—Պետությունը մերն է, յես բանգյուղտուչ եմ քննություն արդյունք եմ կազմում...

Կոմենտարիայի կարիք կա՞. — և ընդհանրապես ի՞նչ կարիք կա նման վոտանավոր գրել, յերբ արձակ ձևով տառնապատիկ լավագույնը կարելի չէ անել:

Չհաջողված կեղծ պատկերի մի նմուշ, «Իսահակը Բեկին» գրքուկից՝

—Կոկորդիս տունելի մեջ  
գնացքը խորտակվում...

Սա նույնիսկ հիպերբոլ էլ չէ, — կարծես գրված լինի գերաններ կլանող ֆակիր-աճապարարի սեանսի ազդեցություն տակ, այլ խոսքով անձարակ «պոեզիական» ֆոկլոս...

Վերոհիշյալ որինակները բերված են պատահական կերպով, վոչ վորպես տվյալ բանաստեղծի ամբողջ արվեստը բնորոշող նմուշներ, այլ վորոքես վեղծ «մանուֆակտուրայի»\*: Կարող են առարկել՝ վոր Չաքենցն էլ ունի չհաջողեած առգեր, վորոնք կարելի չէ ջոկել վորպես նմուշ — յեթե այդպիսիք կան, դրանք էլ շնն կարող

ազատվել մեր վորակումից: Բացարձակ արժեքավորում անհնարին է, խնդիրը այն է թե, վոր պոետը կամ նրա վոր յերկը ինչ չափով է մոտենում մեր մասնանշած սահագարգիե, հարաբերականությունը շատ խելքի մոտիկ մի թեորիա չէ:

Վերցրեք Ազատ Վշտունու մի վոտանավորը, նույնպես գրված Ստամբուլի մասին — «Պոեմ Թուրքական»-ը — այտեղ կա ռիթմ, հանգ, ալլիտերացիա, գաղափար, պատկեր և... այդքան. — դենը դուք գգում եք բանաստեղծի անգորությունը. այդ անգորությունը իր ապաստանը վնտոում է արվեստի արտաքին եֆֆեկտների մեջ, բայց չի կարողանում թազնվել. գգում եք վոր յեթե պոյեմը մի քիչ էլ յերկարի այդ անգորությունը դուրս կթուչի ձևի կապանքներից. — ինչո՞ւ — վորովհետև տաղանդներին հատուկ եներգիան, պաֆոսը, տեմպերամենտը, նույնիսկ յերևակայությունը պակասում են նրան:

Յերբեմն դժվար է լինում ջոկել կեղծը իսկականից. բայց դա կարճ է տևում. իսկական արժեքները ռեկլամի հետ կապ չունեն:

\*

Վերջացնելով մեր գրույցը Չարենցի արվեստի մասին, հարկ ենք համարում ավելացնել, վոր Չարենցը իր ստեղծագործություն կարևոր շրջաններից մեկում հետևելով Մայակովսկուն, դավաճանել է իսկական Չարենցին, տարվել է ինչ վոր «ուացիոնալ ցնորքներով», ցանկանալով իր տա-

զանգի հիմնական կողմերից մեկը հաղթահարել — այդ կողմը նրա ներքին անգուսպ լիրիկան է, վոր, ամեն բույե, ռիթմի խորը զգացումով գլուխը դուրս է հանում: Գուցե Չարենցի ապագա ստեղծագործություններն ավելի հաստատ ապացուցեն մեր ասածները: Այդ լիրիկան մենք նկատում ենք նույնիսկ նրա արձակ չերկի «Յերկիր Նայիրի»-ի մեջ, Պիլնյակի վոճն հիշեցնող չերկարաշունչ, ռիթմական պարբերություններով: Թյուրիմացության տեղի չտալու համար՝ արվեստի ստանդարդի մասին կասենք հետևյալը. — հայ նորագույն (հեղափոխությունից հետո) բանաստեղծական արվեստը լավագույն կերպով արտահայտվել է Չարենցի չերկերի մեջ. ամենաբարձր կետը, վորին կարողացել է հասնել բանաստեղծական արվեստը, պետք է փնտռել Չարենցի մեջ. — ահա բանաստեղծական արվեստի այն հարաբերական ստանդարդը, վորի վրա կարելի չէ չափել հայ նորագույն բանաստեղծական արվեստի նվաճումները:

ՄԻ ՔՍՆԻ ԽՈՍՔ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ՅԱՂՍԶԱ-  
ՓՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հայերեն լեզվին հատուկ չափածո տողը բաղկացած է լինում առանձին անդամների իրարուց բաժանվում են կամ հանգստով կամ շեշտով:

Մթին աչքերում / արտասուք չկայ —

չերկանդամ տողը բաժանված է հանգստով:

Ինձ թաղեք, / չերկ կարմիր, / վերջալույս /  
ն է մարում...

Վոչ արաննջ, / վոչ մրմունջ / սգավոր  
Հեռացիր / մոռացիր / ինձ հավետ:

բառանդամ և չեռանդամ տողերը բաժանված են շեշտերով:

Ուրեմն, հայերենը չունենալով ֆեռակաճական կամ ձայնակաճ շեշտ, ունի տաղաչափական շեշտ: Հ. Աթանաս Տիրոջանը իր «Արվեստ տաղաչափության»\*) համառոտ ձեռնարկի մեջ շոշափելով այս խնդիրը, ընդհանրապես հայերեն բառերը համարում է բուք, այսինքն՝ ձայնը չերկարում և հանդչում է վերջին վանկի վրա. ուստի չերկ այս վերջին վանկին հաջորդե մի այնպիսի բառ, վորն իր նախընթացի հետ տրամաբանական սերտ հարաբերություն ունի (կամ չերկու բառեր մի բարդ

\*) Վենետիկ, 1913.

բառ կազմեն), այդ ժամանակ՝ առաջին բառի վերջին վանկը բուք—շեշտի տեղ ստանում է սուր շեշտ—որինակ Տերչանի այս վոտանավորի մեջ—

Պայծա՛ռ են / ասողե՛րը  
 Ասողե՛րը / շողո՛ւն են  
 Սրտո՛ւմ իմ / ստվե՛ր ե...  
 Խավա՛ր ե / հոգո՛ւմ իմ:  
 Ուղի՛ն իմ / խոտո՛ր ե  
 Ու միշտ յես / մեկի՛ն եմ  
 Տրտո՛ւմ ու / մոլո՛ր .ե,  
 Մոլո՛ր .ե / հոգի՛ն իմ:

Այստեղ պայծառը միանալով եճի հետ վերջին վանկը սուր շեշտ է ստանում և յերեք վանկերը միասին կազմում են բոլորոց չափ: Նույնը եղողն են, սրտում իմ, ստվեր է և այլն: Մենք՝ պայծառ, շողուն, ստվեր և այլն բառերը առանձին արտասանելիս վերջին վանկը սուր չենք շեշտում, այլ մի քիչ յերկարացնում ենք, ավելի շուտ հանգստի տպավորություն թողնելով: Այս շեշտն է վոր կոչվում է տաղաչափական և կիրառվում է հայ բանաստեղծների կողմից: Նորագույն պոետները, Վահան Տերչանից սկսյալ, գործ են ածում բազմազան չափեր, ինչպես՝ աճապես, աճեիբաբ, սոճե և այլն, զուգորդելով արամաբանական կամ քերականական կապ ունեցող բառեր, սուր շեշտը ստանալու համար որինակ Տերչանի՝ վերոհիշյալ տո-

ղերը գրված են ամբողջապես ամֆիբրաբ չափով: Հայերեն լեզուն չունի այնպիսի բառեր, վորոնք շեշտվելին առաջին կամ միջին վանկի վրա, բացառությամբ մի քանի պոզայիբ բառերի, ինչպես՝ վորչափ, նոճնքան, իհարկե և այլն. սակայն սրբանք ել բարդություն լինելով բացառություն չեն կարող կազմել, և չեն խախտում լեզվի կանոնը: Հայ բանաստեղծները մեր մատնանշած բանական շեշտից ոգտվելով՝ յերոպական լեզունեւին հատուկ զանազան չափերով գրելու համար, հնարավորության սահմաններում գտնում են այնպիսի բառերի զուգորդություններ, վորոնք կարողանան բավարարել տվյալ չափին: Սակայն հարողանան բավարարել տվյալ չափին: Սակայն հաճախ նման քմահաճ բաղադրությունց չափազանցությունը ցանկալի արդյունք չի տալիս, առաջ բերելով միորինակություն և տաղտուկ: Հայկական տաղաչափությունը (վոչ կլասիկ) իր հավասար վանկեր ունեցող անդամներով ավելի ընդունակ է յերաժշտական եֆֆեկաներ և իմաստի ուժ տալ բանաստեղծության: Հավասար վանկեր ասելով չպետք է հասկանալ, վոր յուրաքանչյուր տողը կազմված է լինելու հավասար վանկեր ունեցող անդամներից, բանաստեղծական մի տող կարող է կազմված լինել վանկերի թվով անհավասար անդամներից, որինակ յեռավանկ և քավանկ խառն՝ ինչպես—

Արեգակը / հուր ու վոսկի / յե մաղուն

հնգավանկ, քառավանկ և յեռավանկ՝

Թեթև եր արվեստն / իմ՝ խնդում,  
Իսկ կյանքըս այնպես / դժվարին եր,  
Այնպես միշտ անոգ / ու լոխն եր,  
Այնպես միշտ մոլար / ու անտուն:

Տերչանը հաճախ դորժ ե ածում 11 վանկանի յեռանդամ չափը և հասնում մեծ եֆֆեկտի, որինակ—

Լուսաբացին / նա բարձրացավ / կախողան  
(Արևածագ, ո՞ւ արշալույս / արչունոտ)  
Կանգնած եյին / զինվորներն / ու քահանան  
Գունատ ու լուռ / կանգնած եյին / նրա մոտ:

Ցեղ ալլ բազմաթիվ չափեր, ինչպես՝ 3—3,  
4—3, 4—4, 5—4, 5—3, 3—3—3, 4—3—4—3,  
4—4—3, ևլն, նայած բանաստեղծի ցանկություն կամ «ներշնչման» տեմպին:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԱՅԺՄԵԱԿԱՆ Հ Ա Ր Ց Ե Ր

### I

Մեր որերի գրականությունը և արվեստը ծաղկման նպաստավոր պայմաններ ունին, թե Սորհրդային միություն մեջ ընդհանրապես և թե Սորհրդային Հայաստանում՝ մասնավորապես: Սակայն հնայած այս նպաստավոր պայմաններին՝ հատկապես գրականությունը, Հոկտեմբերի հաղթական վերելքից հետո, չի ցույց տալիս ակնառու կերպով զարգացման ուժեղ նշաններ, թե «ուղեկից» և թե պրոլետ-գրողների կողմից: Սորհրդային Հայաստանում գոյություն ունին պրոլետ-գրողների յերկու միություններ, վորոնք կարծես սկսում են կրել նեղ խմբակային բնույթ, բացասելով հակառակորդ խմբակի ընդունելիությունը՝ պրոլետարական գրականության սկզբունքները տեսակետից: Այս միություններից չուրաքանչյուրն առավելապես մտահոգված ե իր գերազանցությունն ապացուցելու խորագույն ցանկությունը: Մրցումը գրական ասպարիզում, անշուշտ, թուլատրելի չե, սակայն մրցման յեղանակները նույնպես կարեվոր են, և հաճախ բացասական դեր են խաղում, իրենց նեղ և անհամբերող արտահայտություններով, հակառակորդին վարկաբեկելու ձգտումով:

Հայ պրոլետ-գրողների ճնշող մեծամասնութիւնը պոետներ են: Արձակագիրներ համարյա չկան: Ինչո՞ւ: Վորովհետև թվում է գեղարվեստական արձակը առավել կամ նվազ չափով գործունի ուրջեկտիվ ճշմարտութիւնների և ֆակտերի հետ, վորոնց ուսումնասիրութեան համար անհրաժեշտ է մեծ ջանք և պատրաստութիւն, վորից դժբախտաբար զուրկ են մեր պրոլետ-պոետներից շատերը և կարծես հակամետ չեն ձեռք բերելու: Տարորինակ կերպով, մեզ մոտ, չերկուտուն այսպես թե այնպես հաջողված վոտանավոր գրողը պոետների շարքն է դասվում, և մեծ-մեծ տառերով չերևում թերթերի և հանդեսների մեջ: Արվեստի և վարպետութեան այս հասկացողութիւնը արգելք է հանդիսանում գրական և արվեստի «լավագուշն ստանդարտների» տիրապետութեան, և արդյունքը լինում է ցած վորակի գրական «ապրանքների» շրջանառութիւնը, վորոնք, ի հարկէ, սպառման չենթակա չեն լինում:

Մեր որերի գրականութեան և արվեստի գլխավոր հատկանիշը պետք է լինի—հասկանալի ձևեր գտնել ընթերցող մասսայի համար:—Ի՞նչ է նշանակում հասկանալի ձևեր գտնել մասսայի համար: Այդ նշանակում է՝ թողնել աբսուրդ հրացումը, վորին փաստորեն հետևում են, գուցե առանց կասկածելու, մեր մի շարք պրոլետ-պոետները: Ամբարակտ հզացումը արվեստի այն ըմբռնումն է, վորին կառչում են «արվեստն արվեստի համար» տեսութեան կողմնակիցները: Մեր

պրոլետ-պոետներից մի բանիսը, այն էլ աչքի ընկնողները, գործնականում կիրառում են արվեստի վերացական հղացման մեթոդներ, աչքից կորցնում են գոյութիւն ունեցող թանձրացյալ իրողութիւնները և պայմանները, և սրբանց գլխի վրայից՝ «Յունկերս»-ով սավառնում են դեպի չին կուլին, Ռուսը, Մարոկկոն, Հընդ-կաստանը և այլն: Բացի այս արատրակա եֆոսիգ-վից, գոյութիւն ունի մի այլ տեսակի աբսուրդ-գիտ: Ի՞նչ նոր կառուցվող շինարարութեան գործունների, ինչպիսիք են—Նրանցքները, հիդրո-կայանները, տրակտորները և այլն,—բանաստեղծական ալեգորիկ կամ սիմվոլիկական արատրակցիան է, լեֆո-ֆուտուրիստական ձևերով, մենք կասենք՝ զուտ ինտելիգենտական մոտեցումով, առանց նույնիսկ տարրական ծանոթութիւն ունենալու տրակտորի կամ գլխամոյլի կառուցվածքին և այն պայմաններին, վորոնց մեջ տեխնիկայի այդ բարդ նվաճումները կարող են նպաստել ինտենսիվ հողագործութեան կամ արդյունագործութեան: Հաճախ նույնիսկ կարելի չէ չենթածուրդել, վոր սրալսոր կամ դիեմա՞ն չերգող պոետը սեփական աչքով չի տեսել նրանցից մեկն ու մեկը, գուցե և տեսել է հեռվից, կամ լսել և կամ կարդացել է զբերում: Հորջուր անգամ ավելի ոգտակար կլինէր մասսայի համար հասկանալի լեզվով մի բրոշուր գրել տրակտորի, ռադիո-կայանի, հիդրո-կայանի և ուրիշ նման բաների մասին, քան թե խճճվել բանաստեղծական վերա-

ցական և սիմվոլական բարդութեան մեջ, հաճախ տանջելով մատաղ պիտոների կամ գլուղացի կոմիտիների ուղեղը\*):

## II

Կա նույնպես մի կարևոր հարց, վորը հաճախ վեճի առարկա չե լեղել: Այդ հարցը գրականութեան և արվեստի դերի բնորոշումն է: Ակսիոմալի պես մի բան է արդեն այն հաստատումը, թե գրականութունը և արվեստը ունին հասարակական խոշոր կշիռ, վորպես հասարակութեան զարգացման կարևոր ազդակներ: Մեկնելով այդ տեսակետից, ակներև է վոր գրականութունը նույնպես դաստիարակչական խոշոր գործոն է: Ամերիկացի մի հայտնի մանկավարժ ասել է, վոր դաստիարակութուն նշանակում է մի բան փոխել\*\*), առանց փոփոխութեան չկա դաստիարակութուն, ուրեմն և զարգացում: Այն հասարակութունը կամ դասակարգը, վորը չի փոխվում, մնում է միշտ նույնը, չի կարող զարգանալ: Դաստիարակութունը կամ զարգացումը նպատակ

\*) Այս առթիվ ընկ. Ա. Կարինյանը ժամանակին «Սորհ. Հայաստանի» եջերում սպառիչ կերպով արտահայտվել է, և զատապարտել է նոր պոետներին գերարտադրութունը՝ վորպես հասարակական աննպաստ լեռույթ:

\*\*\*) Կ. Մարքսը ասել է նույնը հին փիլիսոփաների մասին՝ վորոնք «միայն բացատրում են աշխարհը, մինչդեռ պետք է փոխել այն»:

ունին ստեղծելու կյանքի լավագույն պայմաններ, վորոնց հասնելու համար նրանք պետք է աստիճանաբար վերացնեն գոյութուն ունեցող աննպաստ պայմանները: Կիրառելով այս սկզբունքը գրականութեան և արվեստի մեջ, վորոնք, ինչպես ասացինք, խոշոր դեր են կատարում մասսաների զգացմունքները կրթելու մեջ, առաջադրվում է նախ հետևյալ կոնկրետ պահանջը—այն է ուսումնասիրել և ճանաչել գոյութուն ունեցող պայմանները, գտնել նրանց բացասական և զարգացման համար աննպաստ կողմերը, և ապա աշխատել փոխել և ուղղել նրանց: Գրականութունը և արվեստը գլխավորաբար գործ ունին զգացմունքների հետ: Զգացմունքների հետ գործ ունենալը շատ դժվարին և նուրբ խնդիր է: Այս բնագավառում անզգույն և գահավեժ գործերակերպը չի տա ցանկալի արդյունք: Չպետք է շփոթել զգացմունքները հույզերի հետ: Հույզերը ունին պրիմիտիվ բնույթ և անմիջական արտադրութուն, ինչպես հրձվանքը, վախը, ցավը: Հեղափոխութեան շրջանում յերևան է գալիս հույզերի մեծ վերելք, մասսաները ապրում են գերանցորդին հուզական կյանք, գրականութեան և արվեստի մեջ առաջ է գալիս հեղափոխական ոտմանտիզմը: Սակայն ՆեՊ-ի շրջանում, չերթ տիրում է խաղաղ ստեղծագործական աշխատանք, հույզերը վորոշ չսփով հանդարտվում են—յեղանակավորվում են: Զգացմունքը յեղանակավորված հույզ է, ավելի կայուն, զուգորդված բազմատե-

սակ տրադիցաների, սովորութչունների և ունակութչանց հետ: Ահա թե ինչու չե դժվար, գրականութչան և արվեստի մեջ, գտնել այնպիսի ձևեր, վորոնք կարող լինեն թափանցել մասսաների զգացմունքային աշխարհը, նուրբ ուղղադիտական միջոցներով պաշարեն նրա քարացած տրադիցիաների միջնաբերդը, գեղարվեստական խոսքով ծեծեն նրա պարխապները, գտնեն անպաշտպան կողմը, և վերջապես, տիրեն նրա սրտին: Մի Բաֆֆի կարող եր ոգտագործել իր ժամանակի հասարակութչան մեջ գոյութչուն ունեցող զգացմունքները և թրթռացնել նրանց իր ցանկացած ուղղութչամբ: Հով. Թումանյանը նույնպես, Չարենցը՝ հեղափոխական հուլզերի շրջանում կարողացավ անել նույնը: Սակաջն մի Ազատ Վշտունի, մի Աբով, մի Ալազան և այլն, չեն կարող անել նույնը: Ինչո՞ւ: Վորովհետև վերջիններս նկատի չեն ունենում գոյութչուն ունեցող զգացմունքները, աբստրակտ հղացումով նրանք ձգնում են կաղմակերպել այնպիսի զգացմունքներ, վորոնք դեռ չեն ծնվել, կամ սաղմի մեջ են գտնվում: Նրանք անկարող են, կամ չեն տրամադիր մշակել արվեստի և գրականութչան այնպիսի ձևեր, վորոնք ընդունակ լինեն ոգտագործելու մասսաների մեջ գոյութչուն ունեցող զգացմունքային կոմպլեքսը, և տան նրան ցանկալի ուղղութչուն, «սխտեմատիզացիայի յենթարկեն», ինչպես ասում ե ընկ. Բուխարինը:

Դասակարգային մոմենտը բնավ չի բացաս-

վում սրանով, ի գուր ե հայ «նապաստովյանների» մտավախութչունը այդ ուղղութչամբ: Վերջիններս, հանձինս իրենց տեսաբան Գ. Լելեիչի (վորի հայերեն թարգմանութչունը Գ. Վանանդեցի չե), շարունակ հիմնվում են Գ. Պլեխանովի վրա, և նրանից բերված ցիտատները բացաղբերով հոգուտ իրենց թեորայի, խիստ բննադատութչան են յենթարկում Վարոնակու ուղղութչունը Խորհ. Ռութարկում Վարոնակու ուղղութչունը Խորհ. Ռութարկում, իսկ մերոնք՝ Մակինցիանին, կապաստանում, իսկ մերոնք՝ Մակինցիանին, վորպես «վարոնակիական» ուղղութչան կողմակիցների՝ հայ գրականութչան մեջ: Այդ բննադատութչան նպատակն ե շեշտել «ուղեկիցները» գրականութչան վտանգավոր դերը, դասակարգային տեսակետից: Սակաջն միայն զրանով չեն բավականանում հայ «նապաստովյանները», նրանք պայքար են սկսում մանր բուրժուական և բուրժուական գրականութչան և արվեստի դեմ, վորոց ներկայացուցիչներ են համարվում ըստ նրանց, հայ իրականութչան մեջ՝ Չարենցը և նկարիչ Մ. Սարյանը: Հարցուր տոկոս այս ցախութչունը Խորհրդային գյուղացիական Հայաստանում, նշանակում ե ընկնել մեր մատնանշած աբստրակտ հղացման ուղիների մեջ:

Բանակուրի մղելով Վարոնակու պաշտպանած «արվեստը վորպես կյանքը ճանաչելու միջոց» բնորոշման դեմ, Գ. Լելեիչը (իմա հայ Գ. Վանանդեցի) մեջ ե բերում Պլեխանովի հետևյալ խոսքերը:— «Ասել թե՛ արվեստը, ինչպես նաև գրա-

կանությունը, կյանքի անդրադարձումն կամ հայելին է, նշանակում է արտահայտել թեև ճիշտ, սակայն դեռ շատ անորոշ մի միտք: Հասկանալու համար թե ինչ կերպով (ընդգծումը Պլեխանովինն է) է արվեստը ցոլացնում կյանքը, պետք է հասկանալ վերջինիս մեխանիզմը: Քաղաքակրթված ժողովուրդների մոտ դասակարգերի պայքարը այդ մեխանիզմի մեջ կազմում է ամենից կարեվոր գապանակներից մեկը (ընդգծում մերն է Վ. Թ.): Ուսումնասիրելով, այդ գապանակը ուշադրության առնելով դասակարգերի պայքարը և նրա բազմապիսի պերիպետիաները (իրադարձությունները) միայն՝ կարելի չե քիչ թե շատ բավարար կերպով բացատրել քաղաքակրթված հասարակութայն հոգեվոր (ընդգծումը Պլեխանովինն է) պատմությունը: Նրա գաղափարների ընթացքը ցոլացնում է իր դասակարգերի պատմությունը և վերջիններիս պայքարը մեկը-մյուսի դեմ\*):

Այս ցիտատով Գ. Լելեվիչը շատ քիչ բան է ապացուցում «Նապաստովյան» թեորայի ոգտին: Ինչքան զգույշ և շրջահայաց է Պլեխանովը, վորպես գիտնական, նույնքան հախուռն և մակերեսային է Լելեվիչը (և նրա հայ հետևորդ Գ. Վանանդեցին):

Ինչ է ասում Պլեխանովից բերված ցիտատը: Նախ այնտեղ մենք նկատում ենք հետևո-

\*) «О принципах Марксистской литературной критики» Г. Делевич, Ленинград 1925, էջ 9:

ղական իստորիզմ, վորի փայլուն ներկայացուցիչն է Պլեխանովը, քաղաքակրթված հասարակութայն հոգեվոր պատմության եպոխաները բնորոշելիս: Պլեխանովը ասում է՝ վոր քաղաքակրթված (այլ խոսքով կապիտալիստական) հասարակութայն մեխանիզմի մեջ դասակարգային պայքարը կազմում է ամենակարեվոր գապանակներից մեկը, և վոր թե միակը: Նշանակում է պետք է լինեն և ուրիշ կարևոր գապանակներ: Հետո, նա ասում է. — հասկանալու համար թե ինչ ձեվով է գրականության կամ արվեստի մեջ ցոլանում կյանքը, պետք է ըմբ նեղ վերջինիս մեխանիզմը: Պլեխանովը վորպես գիտնական ուսումնասիրում է արվեստի պրոբլեմը, այնպես ինչպես այդ տեսում են բնական գիտությունների մեջ, նկատի սենեարով կյանքի մեխանիզմի բազմաանակ գապանակները:

Լելեվիչը մտածում է Պլեխանովից բերված վերոհիշյալ ցիտատով գատապարտել «որչեկարվ ճանաչողության թեքումները», կատարված վարտնակու հայոց կողմից, ոսկայն մուում է ձեռնունայն, վորովհետև Պլեխանովը, ընդունելով հանդերձ վոր կյանքի մեխանիզմի մեջ մեծ տեղ է բռնում դասակարգային գապանակը, բնավ նուտակ չունի սպացուցելու, վոր արվեստը և գրականությունը միջոցներ չեն կյանքը ճանաչելու, որչեկարվ իրականության կոնկրետ պատկերների միջոցով: Պլեխանովի խոսքը վերաբերում է կրիտիկային և գիտական ետևորիկային և նրանց

մեթոդություններ, վորի բնագավառն է բացատրել արվեստը և գրականությունը: Այդ, գիտական եստետիկան միշտ նկատի պետք է ունենա դասակարգային զսպանակը, արվեստի չեղը հասկանալու և բացատրելու համար: Պլեխանովը դրանով բնավ չի դատապարտում որչեկտիվ ճանաչողություն «թեքումները», ընդհակառակը, նա շարունակ դատապարտել է արվեստի այն չեղերը, վորոնք կոնկրետ պատկերներ և որչեկտիվ իրականություն արտահայտություններ չեն չեղել, այլ հեղինակի «տենդենցը» անցկացնելու ցանկությունները: Յերբ ասում ենք դատապարտել է, անշուշտ մի քիչ չափազանցում ենք, վորովհետև Պլեխանովի կիրանած գիտական եստետիկան աշխատում է հնարավորություն սահմաններում որչեկտիվ գիտություն լինել,ինչպես Փիզիկան: Այդ եստետիկան բնավ հավակնություն չունի դասեր կամ խորհուրդներ տալու գրողներին և արվեստագետներին այս կամ այն ձևով ստեղծագործելու\*),—ինչպես այդ անում են «նապաստովցիները», վորպեսզի մարդիկ այս կամ այն ձևով արտահայտեն դասակարգային հոգեբանությունը:

Զարմանալի չէ նույնպես այն միամիտ ապլոմբը, վորով Վարդինը, Ռոզովը, Լելեվիչը, մեզ մոտ Գ. Վանանդեցին, Աբովը ևայն, ճգնում են հիմնավորել իրենց թեորիան նման ցիտաաներով

Մարքսից, Պլեխանովից ևայնից: Պլեխանովն ասել է—«վորևէ քիչ թե շատ ակնառու գեղարվեստական տաղանդ շատ խոշոր չափով կմեծացնի իր ուշքը, չեթե տոգորվի մեր ժամանակի ազատարար գաղափարներով, պայմանով վոր, այդ գաղափարները թափանցեն նրա միս ու արյան մեջ և նա կարողանա արտահայտել նրանց վորպես ճշմարիտ արվեստագետ»: Այս հաստատումը անժխտելի չէ: Սակայն Լելեվիչը սրանից չեզրակացնում է ուրիշ բան, այն է—«ուրեմն, գեղարվեստագետի գասակարգային բնույթից անկախ, որչեկտիվ իրականություն կարող են համապատասխանել միայն առանձին մանրամասնությունները, իսկ ամբողջությունը վերցրած, արվեստագետի ցույց տված իրականության որչեկտիվ ճշմարտությունը կամ անճշտությունը պայմանավորվում է դասակարգային մոմենտով»:—Այդ ինչպե՞ս է վոր արվեստագետը՝ դասակարգային բնույթից անկախ, կարողանում է ճիշտ կերպով տալ առանձին մոտիվները, իսկ ամբողջության մեջ մեղանշում է որչեկտիվության դեմ: Չե՞ վոր այդ մանր մոտիվներից է կազմված գեղարվեստական չեղի ամբողջությունը: Վերջենք Մ. Սարյանի նկարներից մեկը, «Իմականվոր կինը»: Գտնենք այդ նկարի դետալները.—կնոջ կոշիկները, շքազգեստը, դիմակը... Սակայն, արդյոք այս դետալներն անկախ են դասակարգային մոմենտից. միթե բանավորումներն կարող է դործ ածել նման բարձր կրունկներով սրածայր կոշիկներ, նման շքազգ-

\*) „Судьбы русской критики“. Г. В. Плеханов, „Сочинения“ Том X, 49՝ 192:

գեստ, գիմակ հայրն: Կարող են առարկել, վոր այստեղ հարցն այդ գետալների որչեկտիվ ճըշտութեան մասին ե: Յես կասեմ վոր այդ գետալներին մեջ որչեկտիվ ճշտութեուն չկա. վոչ մի կոշկակար նման կոշիկ չի կարել կլանքում, վոչ մի գերձակ՝ նման շքազգեստ, վորովհետև վոչ Սարչանի նկարած կոշիկները, վոչ ել շքազգեստը չի կարելի հագնել, հենց առաջին անգամին կպատուվելին: Սակայն այս բոլորով հանգերձ, նկարը մոտ է որչեկտիվ իրականութեան, կամ նույնիսկ ավելի ուժեղ է և արտահայտիչ՝ քան իրականութեունը: Միթե դուք կարող եք վորեւ գեղարվեստական չերկի մեջ ցուլց տալ մարդիկ և իրեր, վորոնք բացարձակ որչեկտիվ լուսանկարչական ճշտութեուն ունենան և անկախ լինեն արվեստագետի կուլտուրական վոր աստիճանի վրա գտնվող դասակարգին պատկանելուց: Մի նեղ բանվոր և մի կրոպացի ինժիներ լուսանկարչական նույն ապարատով կարող են, ի հարկե, որչեկտիվ ճշտութեամբ նկարել մի պեչզաժի ամենամանր գեսալները—սա ճիշտ է անկախ է դասակարգային մոմենտից. սակայն, արդէոք նման են նեղրական պեչզաժի և իմպրեսիոնիստական պեչզաժի մեջ վերարտադրված ծառերը, բլուրները և այլն: Վերջրեք չապոնական պեչզաժը և համեմատեցեք չերոպականի հետ, կգտնեք նրանց մեջ գետալների նույն որչեկտիվ ճշտութեունը: Ել, սւր մնաց Գ. Լելեվիչի և նրա հետևորդ Գ. Վանանդեցու թուխակորեն կրկնած «գուլը» թե՛ ար-

վեսագեսի գասակարգային բնույթից անկախ են առանձին գեսալները չեվ համապատասխանում են որչեկտիվ իրականութեան:

Այժմ՝ գեղարվեստական չերկի ամբողջութեան որչեկտիվ ճշտութեան մասին: Գ. Լելեվիչը ասում է:—«Մոմենտը շատ որչեկտիվ իրականութեան մոտենում են պատմական վերելքի մեջ գտնվող դասակարգին պատկանող արվեստագետները, իսկ ընդհակառակ՝ պատմականորեն անկման մեջ գտնվող դասակարգին պատկանող արվեստագետները ամենից նվազ ընդունակ են որչեկտիվ իրականութեան համապատասխանող պատկերներ տալ»... Ապացուցելու համար այս, նա բերում է վերին աստիճանի վիճելի մի որինակ—Պուշկինի «Կապիտանի Աղջիկը», վորի մեջ «առանձին տիպերը և Շրագուհները ճիշտ են, սակայն ժողովրդական մեծ շարժման (Պուգաչովի ապստամբութեան) իմաստը ազավաղված է (ընդգծումը Գ. Լելեվիչինն է): Այդ պատմվածքի մեջ չկա սուբյեկտիվ կեղծիք (Ֆայլը), սակայն առանձին ելեմենտներն այնպես են դասավորված, վոր ընթերցողը վարակվում է, ազնվական դասակարգի «սոցիալական զակագին» (պատվեր) լիովին համապատասխան եմոցիաներով (ընդգծումը մերն է Վ. Թ.), այսինքն մեծագույն համակրութեամբ՝ գեպի Յեկատերինե կայսրուհին, Գրինևը, Իվան Կուզմիչը և տիրող դասակարգի այլ «ազնվազարմ» ներկայացուցիչները»\*)...

\*) Տես Գ. Լելեվիչի նույն գիրքը, էջ 11.



կարելի չե բերել բլուրավոր որինակներ, սկսյալ Սոփոկլեսից մինչև Մետերլինկը, վորոնք քաղզրագիտության տեսակետից շատ վիճելի չեն և չեն դիմանա Լեյեվիչների անդամահատող նշարակին, սակայն և այնպես, ինչպես Լուսնաշարակին և հիշում— «միայն իպիտոն ե չի հասկանում անտիկ կուլտուրայի ամբողջ նշանակությունը պրոլետարիատի համար\*»)։ Ի հարկե Լեյկիչը և իր կողմնակիցները թեորիապես չեն ժխտում հին կուլտուրայի նշանակությունը, սակայն գործնականում կիրառում են այնպիսի քննադատական մեթոդներ, վորոնք խորապես շեշտում են հին գեղարվեստական արժեքների վտանգը, վորպես մասսաներին վնասակար եմոցիաներով վարակող չերկեր, քանի վոր վերջիններիս մեջ շատ հաճախ չերևան են գալիս «առաքինի» և «մեծահոգի» ազնվականներ, թագավորներ, դուքսեր, կոմսեր, նույնիսկ տերտերներ, («Անտիգոնե», «Համլետ»), «Ռոմեո և Ջուլիետա»), «Փոթորիկը», «Ավագակներ» և այլն բազմաթիվ հանձարեղ գլուխ գործոցներ)։

Վերջացնում ենք այս գլուխը, մեջ բերելով Լուսնաշարակու կարծիքը Պուշկինի ստեղծագործության վերագնահատության մասին, վորը կարող է և վերաբերել ընդհանրապես հին կուլտուրական արժեքներին։— «Պուշկինին չի կարելի պարփակել վոչ մի ֆորմուլայի մեջ, առանց ընկ-

\*) Մարքսի խոսքերը, «Литературные силуэты», А. Дуначарский, Госиздат 1925, էջ 67։

ներու նեղ պեղանտիղմի (իմաստակության) մեջ։ Ի հարկե, շատ բան Պուշկինի գաղափարների և զգացմունքների մեջ պատկանում ե ազնվական դասի հոգեբանության, հասկանում ե նրա եպոլաան լեզվ գառ հեռու չե մե հեռաբեռնայ աահմաններից։ Սակայն զրա կողքին՝ Պուշկինն ունի խոշոր, և դեռ քիչ հայտնագործված «հանրամարդկային» նշանակություն ունեցող հուզական—գաղափարային բովանդակություն։ Մենք շատ լավ գիտենք, վոր հանրամարդկային կուլտուրան հնաբավոր կդառնա միայն կատարյալ կոմունիզմի շրջանում, սակայն մասամբ նախատեսում ենք, վոր այդ հանրամարդկային կուլտուրան կբովանդակե իր մեջ մի շարք սկզբունքներ, վորոնք, գուցե նվազ վորոշակի, սակայն այնուամենայնիվ բարձրորեն հնչել են անցյալ կուլտուրայի առանձին մոմենտներում»)։

### III

Մեր որերում զրոգներին և քննադատներին շատ ե զբաղեցրել նույնպես ձեվի և բովանդակության ինդիքը։ Կան մարդիկ՝ վորոնք գրականության և արվեստի մեջ ընդունում են միևնույն ձեվը և բոլորովին ժխտում են բովանդակության հասկացողությունը։ Կան նույնպես ուրիշներ, վորոնք բաժանում են ձևը բովանդակությունից—ինչպես գինու բաժակն են դատարկում,—յենթադրելով վոր արվեստի մեջ գինին

\*) Ibid. էջ 68։

բովանդակութիւնն ե իսկ բաժակը՝ ձեր: Այս որինակը շատ խելքի մոտիկ ե, քանի վոր, վերջ ի վերջո, կարևորը գինին ե ե վոչ թե բաժակը, վերջինս չի կարող ազդել իր պարունակութեան հատկութեան վրա: Սակայն այս որինակը շատ դուր գաղափար կարող ե տալ ձեի ե բովանդակութեան մասին (արվեստի ե գրականութեան մեջ): Արվեստի յերկի մեջ ձեր ե բովանդակութիւնը «Իմիացես միանում են: Արվեստի յերկը մեխանիկական խառնուրդ չե, սակայն յենթակա անալիզի: Այդ անալիզի ընթացքումն ե, վոր յերևան են գալիս բաղադրող տարրերի հատկանիշները, այլ խոսքով ձեի ե բովանդակութեան փոխարարներութիւնը:

Ա. Լուսնաչարսկին, քննադատելով հայտնի գերմանացի գեղագետ մարքսիստ, Վիլհելմ Հաուզենշտեյնի տեսակետները, բաժանում ե իդեոլոգիական արվեստը (գրականութիւն) կերպարվեստից, գտնելով վոր վերջինիս մեջ ձեն ունի գերակշռող նշանակութիւն, մինչգեռ առաջինի մեջ՝ յերկրորդական\*): Գ. Լեյբվիչը նույն խնդրի շուրջը գրած իր մի հոդվածում նման բաժանում չի կատարում, ե ձեվից տալիս ե անխտիր յերկրորդական նշանակութիւն, ձեր համարելով լոկ բառակաճ մատերիալ ե սրա մշակման պիտոցեք: Համարելով վոր այս տեսակետը վերաբե-

\* ) „Искусство и литература в марксистек. освещении“, Москва, 1925, ԿՂ՝ 112:

րում ե գրականութեան, վերցնենք գրական մի դպրոց-նոմանտիզմը: Ռոմանտիզմը արվեստի ձեվ ե, թե բովանդակութիւն: Ինչո՞վ ե գանազանվում ռոմանտիզմը այլ ուղղութիւններից, սիմվոլիզմից, ֆուտուրիզմից կայն: Յուրաքանչյուրն այս դպրոցներից ունի իր տեսականը ե գործնականը, ձեով ե բովանդակութեամբ հակադրվելով մեկը մյուսին: Յուրաքանչյուրն այդ ուղղութիւններից ունի նույնպես «բառական մատերիալի» մշակման հատուկ յեղանակները, սակայն դա միայն արտաքին ձեվն ե, տեխնիկան:

Յեթե ձեր լիներ լոկ բառական մատերիալը— ե վերջինիս մշակման պիտոցեք, — վոր ունի յերկրորդական նշանակութիւն ըստ Լեյբվիչի, ապա մենք պետք ե մի կողմ թողնելինք ձեական տարբերութիւնները ե զիմելինք բովանդակութեան տարբերութեան, (բովանդակութիւնը հեղինակի աշխարհագրացումն ե համարում Լեյբվիչը): Սակայն, այստեղ հարց ե ծագում, արդոք ձեվն միայն բառական մատերիալն ե ե ստիլը: Հեղինակի աշխարհագրացումը, այլ խոսքով նրա գաղափարները, վորպես «հում նյութ», պատկանում են թեորիական բնագավառին, իսկ արվեստը գերազանցորեն գործնական հատկանիշ ունի: Արվեստ— նշանակում ե մի բան կատարել, վոչ միայն պարզապես կատարել, այլ ե վարպետորեն կատարել: Այստեղ ե վոր շեշտվում ե «ձե գտնելու» խոշոր նշանակութիւնը: Գրականութեան մեջ հայտնի յե, վոր Գաստայեվսկին ունի անխնամ յեղու,

աղքատ փոճ, նույնը ասում են Բալզակի համար՝ ֆրանսիական գրականութեան մեջ: Սակայն և այնպես Բալզակի և Դաստայեվսկու նկարած պատկերները ավելի քան կենդանի չեն, հոյակապ, և հավիտյանս տպավորվում են ընթերցող մտքի մեջ: Իրա համար մենք նրանց համարուիւմ ենք վարպետներ, այսինք մի բան շատ լավ կատարողներ, «գերագույն արհեստավորներ»: Ի՞նչպես կարողացան նման լեզվական թույլ տեխնիկայով այդ հանճարները գեղարվեստական ձեպեր գտնել իրենց աշխարհագրացումը մարմնացնելու համար: Տուրգենևիվը, վոր անհամեմատ գերազանց լեզվական տեխնիկա, բառական մատերիալի մշակման լավագույն պրիոմներ ունի, չի կարող մրցել նրանց հետ գեղարվեստական հոյակապ ձևեր պատկերելու մեջ: Իուրս և գալիս, վոր ձևը միայն բառական մատերիալն և սրա մշակումը չե այլպես, Բալզակը և Դաստայեվսկին վարպետներ չեյին լինի: Ուրեմն ի՞նչ և ձևը: Լուսնաչարսկին ասում և, վոր ձևը արտահայտչութեան ուժն է (сила выразительности): Այս անժխտելի լի, սակայն հարց և ծագում արտահայտչութեան ուժը բառական մատերիալի հաջող մշակումն է միայն. — ի հարկե փոջ, մենք այդ տեսանք Բալզակի և Դաստայեվսկու որինսակով, վորոնք ունեյին լեզվական թույլ տեխնիկա, բայց արտահայտչութեան մեծ ուժ: Լեյբվիչը ընդունում և Լուսնաչարսկու բնորոշումը և բացատրում և իր ձևով: Նա ասում. և — «վորոնք են մեր արտահայտչութեան

միջոցները, — ամենից ասա՞ լեզվական մատերիալը, հետո պրիոմներ: Լեզվական մատերիալը չենթարկվում և մշական կոմպոզիցիայի, եսֆոնիալի (քաղցրահնչունութեան), ռիթմականութեան կանոնների միջոցով և տալիս և մեզ արտահայտչութեան այն միջոցները, այլ խոսքով ձեզք, փոտութեան այն միջոցները, այլ խոսքով ձեզք, վորն անհրաժեշտ և արվեստագետին իր աշխարհարն անհրաժեշտ և արվեստագետին իր աշխարհարղզացումը տարածելու (պրոպագանդայի) համար:\*) Սա արդեն վերաբերում և հրապարակախոսութեան, մի հնացած տեսակետ, նարոգնիկների ժամանակից մնացած, և արժանի կերպով հերքված Պլեխանովի կողմից: Պլեխանովը Գլ. Ուսքված Պլեխանովի կողմից: Պլեխանովը Գլ. Ուսքված սպենսկու մասին գրած ուսումնասիրութեան մեջ ասում և՛ «ինչից և ծագում թույլ կողմը նարոգնիկական բելլետրիստիկայի մեջ: Այդ յերևան և յեկել հատկապես հասարակական շահեկանութեան (интерес) գերակշռութեանից գրական շահեկանութեան վրա: Զուտ գրական-գեղարվեստական տեսակետից՝ տվյալ պատմվածքը կամ պատկերը շատ բան կը շահեր, յեթե հեղինակն ավելի ոբյեկտիվ վերաբերմունք ունենար գեպի իր առարկան: Այս բանը ինքը հեղինակը (Ուսքվենսկին) լավ գիտե, հավանական և, սակայն նրան գրիչ վերցնել ստիպողը վոջ այնքան գեղարվեստական ստեղծագործության պահանջն և, ինչքան մեր հաղարակական փոխհարաբերութեան այս

\*) „Принципы Марксистской Критики“ Г. Ле-  
левич Էջ 97.

կամ այն կողմը բացատրելու ցանկութիւնը\*): Ինչպես տեսնում ենք, Պլեխանովը այստեղ շեշտում է ղեպի առարկան որչեկտիվ վերաբերմունք ունենալու հանգամանքը, մինչդեռ Լեւեվիչը չի ընդունում գրականութեան և արվեստի մեջ Վարոնսկու պաշտպանած որչեկտիվութիւնը, վորպես «կյանքը ճանաչելու» միջոց, «վորովհետև ինչպես գունավոր ապակին բաց է թողնում միայն վորոշ գուննի ճառագայթներ, նույնպես և հեղինակի պոլիտիկան բաց է թողնում միայն վերջինիս (պոլիտիկային) համապատասխան հասկացողութիւններ և պատկերներ»: Այս խոսքերն ասել է հանգուցյալ Վարովսկին (և նա իրավունք ունի,) այնուամենայնիվ՝ չեն հաստատում Լեւեվիչի թեզը, վորովհետև ինչպես վերևում ասել ենք, վոր վերջինս, բաժանելով առանձին մտտիվները գեղարվեստական յերկի ամբողջութիւնից, ընկել է բացահայտ հակասութեան մեջ: Ճիշտ է նույնպես այն տեսակետը, վոր արվեստագետը չի վերարտադրում իրականութիւնը լուսանկարչական ճշտութեամբ, ի հարկէ սա չի նշանակում, վոր արվեստը վոչ մի գործ չունի որչեկտիվ իրականութեան հետ, սակայն այդ իրականութեան գեղարվեստական մշակման «խտորումը» գերազանցորեն ձևական է: Որինակ՝ նկարչութեան մեջ վերջնենք թեկուզ Մ. Սարյանի նկարած Յերեանի պետական թատրոնի վարագույրը: Այդ

\*) Г. В. Плеханов „Сочинения“ том X, ԿՂ՝ 13.

նկարի վրայ կան ծառեր, լեռներ, ավերակներ, մարդիկ (գլուղացիներ) և այլն: Այդ ծառերը, սարերը նույնքան համապատասխան են որչեկտիվ իրականութեան, ինչքան դիտողը ստանում է սարի կամ ծառի զգայական տպավորութիւն: Ինչքան ուժեղ է այդ տպավորութիւնը, նույնքան մոտ է նկարը որչեկտիվ իրականութեան, խտացնելով այդ իրականութեան ելական հատկանիշները: Կարեւր է ասել, վոր այստեղ լեռների, ծառերի ձևը յերկրորդական տեղ է բռնում: Ի հարկէ վոչ, վորովհետև տէլայ ձևը միայն կարող է մատչելի լինել տեսողական զգայարանին և ներգործել համապատասխան տպավորութիւն: Այստեղից պարզ է, վոր նկարի նյութը, այլուժեւոր ունի յերկրորդական նշանակութիւն, քանի վոր այն՝ աչս կամ այն ձևով միայն մատչելի չէ մեր տեսողութեան: Այժմ մնում է բնորոշել այն ձևը, վոր գործադրում է Սարյանը, վորովհետև այդ «ձևով» միայն ըմբռնելի կլինի հեղինակի աշխարհագրացումը: Բովանդակութիւններ այստեղ չի կարող ամբողջապես արտահայտել նկարչի արվեստի գերակշռող հատկանիշը: Ուզում եք պատրաստի ապացույց — վերջերք նույն նկարչի հեղափոխական և պրոլետարական բովանդակութիւն ունեցող պատկերատարական հատկանիշին, հրաժարվել է իր «ձևից» և վեստի հատկանիշին, հրաժարվել է իր «ձևից» և հայեցողութեան կետից. — բոլորովին վոչ:

Վերադառնանք բեմի վարագույրին: Ասում են, վոր Լեւեվիչի հետևորդ մի հայ բնադատ այդ

վարագույրի նկարը համարել ե բուրժուական, կամ, չեթե կուզեք, հակահեղափոխական: Սա այնպիսի արքունիք է պեղանա քննադատութիւնն է, վոր չի գիմանում առողջ դատողութեան ամենափոքր մասի շարժումին: Պարզ ե վոր այդ «մեղադրանքը» չեր կարող վերաբերել միայն ֆորմային, քանի վոր հիշյալ քննադատը, թվում է, խորշում է ֆորմալիզմից: Յեթե հիշյալ քննադատը շարունակե պնդել, վոր այդ նկարի բովանդակութիւնը միայն հակահեղափոխական է, ապա մեղադրանքը ավելի ճիշտ բամբասանքը ինքնարտիստիկան կվերանա, քանի վոր Սարջանի այդ նկարի մեջ մենք տեսնում ենք թորհրդային Հայաստանի բնութեան մի անկյունը, իր սուր սարերով ե ծառերով, հնադարյան մի տաճարի կամ պալատի բեկորներով (վորոնց մեծ խնամք ե տանում հնութիւնների պահպանութեան պետական հիմնարկութիւնը) ե գլուղացի աշխատավոր ժողովուրդը՝ շուրջպար բռնած մի խրճիթի տափակ կտուրի վրա: Մնում է Սարջանի ձեզ: Մեր կարծիքով այդ ձեռ ավելի հեղափոխական է քան մի շարք իրենք իրենց պրոլետարական բանաստեղծ անվանողների գործ գրած այլեզորիկ-սիմվոլական տաղտկալի արատակցիան:

Սարջանի ձեռ հատկանշվում է արտահայտութեան մաքսիմումի հասցրած ուժով: Նա հետու չե պատիվ իմպրեսիոնիզմի նատուրալիստական հակումներից: Այս հատկանիշը Սարջանի արվեստը դարձնում է գերազանցորեն հեղափոխական, վո-

րովհետե նա ընդունակ է չերևույթների արտահայտութեան ուժն ինտենսիվութեան հասցնել, տապալելով ակադեմիզմի շարուն հասկացողութիւնները, միաժամանակ պարզացնելով տպավորութեան եներգիւյի ե եֆֆեկտներ ստեղծելութեան մեթոդները, առանց ավելորդ ճարտասանութեան ե շլայնող պոռոտութեան: Միթե արտահայտութեան ուժն ինտենսիվութեան հասցնելու ձգտումը արվեստի մեջ հեղափոխական չերևույթ չե, միթե այդ եներգիւյն չե, վոր ընդունակ է դարձնում Սարջանին մշակել հեղափոխական սլուժետներ (տես «Թորհ. Հայաստանում» ե այլուր լույս տեսած նրա պլակատները), իր արվեստի ուժով նրանց տալով արտահայտութեան հազվագյուտ ուժ, մասսայի համար ըմբռնելի ե տպավորող ձևակերպում: Չնայած վոր Սարջանը պրոլետարական նկարիչ չե, սակայն նրա արվեստն ավելի շատ ծառայութիւն կարող է մատուցել պրոլետարական արվեստին քան մի գլուժից ինքնակոչ տեսաբանների ե գեղագետների վերացական թերիաները:

Չևի ե բովանդակութեան փոխհարաբերութեան մասին\*) կարելի չե ավելացնել հետևյալը:

\*) Վորչեվե գեղարվեստական չերկի գեղագիտական ֆակտորները ժամանակակից գիտական ետետիկան համարում է գլխավորապես չերեք—1) զգայական ֆակտոր, 2) ձեվակաճ ֆակտոր ե 3) իմաստի կամ իդեյական ֆակտոր: Զգայական ֆակտորն անմիջապէս «Գիր ու Արվեստ»—7.

Արվեստի մեջ ձևին յերկրորդական տեղ տալը կարելի չե ասել գիտական սխալ է, վորովհետև ատանց ձևի չկա գեղարվեստական յերկ: Ասում են նույնպես, վոր բովանդակութունը «ինչն» է իսկ ձևը «ինչպեսը»: «Ինչը» կյանքն է, որ բնական իրականությունը, իսկ «ինչպեսը»՝ արտահայտությունն է միջոցները: Լեզվիչը և կողմնակիցները պնդում են վոր կարևորը ինչն է, և վոչ թե ինչպեսը, քանի վոր «ինչը» բովանդակությունն է, վորի մեջ մտնում է և հեղինակի աշխարհագրացումը: Սակայն մենակ «ինչը» արվեստ չէ, այլ հում նյութ կամ

կան կապ ունի մարդկային յերկու գլխավոր գզայարանների—լսելիքի և տեսանելիքի հետ, և պատկանում է հոգեբանախոսական բնագավառին: (Որինակ, վերլուծելու համար՝ թե գույները և հնչյունների տոնը կամ նյութաններն ինչ ազդեցություն են գործում այդ յերկու համաշարհային գզայարանների վրա): Ջեվակաս կամ Շորմալ Փակտորը գործ ունի գեղարվեստական առարկայի կամ յերկի ընդհանուր շրջագծի (կոնտուր) և գծերի, գույների և հնչյունների այն կոմբինացիայի հետ, վորով կառուցվում է յերկը. այս Փակտորի մեջն են մտնում համաշարհային յերկը (սիմետրիա, ռիթմ և այլն): Յերրորդ Փակտորը, իմաստի, իդեալի կամ արտահայտության Փակտորն է, վորին շատերը բովանդակություն անունն են տալիս: Տվյալ գեղարվեստական յերկը նախած թե գաղափարների վորպիսի գուգորգություն, (ասոցիացիա) և արթնացնում հանդիսատեսի մեջ, ըստ այնմ նրա յերեակալության մեջ, տիպակական կամ սիմվո-

տեսական բնագավառ, մինչդեռ յերբեք չպետք է մոռանալ, վոր արվեստը գերազանցորեն գործնական է: Տվյալ հեղինակը կարող է ունենալ սքանչելի մատերիալ և հանձարեղ ու ընդունելի մտքեր (այլ խոսքով նրա աշխարհագրամուլը). սակայն այս բոլորը դեռ նախապայման է և վոչ թե արվեստի յերկ, հավասարապես կարևոր է նույնպես «ինչպեսը», այսինքն՝ վորպիսի ձևերով և հեղինակը մշակում տվյալ մատերիալը և մարմնացնում իր աշխարհագրացումը, իր իդեոլոգիան. այստեղ արդեն հեղինակի աշխարհագրա-

լական պատկերներով, դառնում է արտահայտությունը այս կամ այն իմաստի կամ իդեալի: Ժամանակակից յերկական գեղագետների մեջ ֆորմալիստներ են անվանում նրանց, վորոնք մեկնելով այն տեսակետից վոր գեղեցիկը առարկայի ֆիզիքական հատկությունը չէ, ինչպես ձևը կամ գույնը, այլ գուշ հարաբերական հատկանիշ՝ յերբեմն յերեան գալով իրի այս կամ հատկության մեջ, հետևաբար կախում ունենալով իրի գաղափարն հատկությանց, գույնի և շրջագծի այս կամ այն ձևական կոմբինացիայից—յիզրակացնում են, վոր գեղեցիկը ձևն է միայն, ի հարկե վոչ քարացած, այլ հարափոփոխ ձևերը: Ֆորմալիստների հակառակ, եքսհարափոփոխ ձևերը (Գերմանիայում) վորպես իգեալիսպրեսիոնալիստները (Գերմանիայում) վորպես իգեալիսպրեսիոնալիստները, պաշտպանում են իդեական Փակտորը, գեղարվեստական յերկի արտահայտած իմաստը, նրա իդեալական բովանդակությունը: (Encyclopaedia Britannica, «Esthetics»).

ցումը ունի և ձեզակաց նշանակութիւնն, սերտ կերպով միանալով բովանդակութեան և կազմելով մի անբաժան ամբողջութիւնն: Բովանդակութիւնն ից կամ ձեկց մեկն ու մեկին գերակշռող նշանակութիւնն տալը միաք չունի. վորովհետև չեթե կարող ե պատահել մի յերկ, վոր ամբողջապես տողորված ե ռեակցիոն գաղափարներով և ունի հանճարեղ ձև, այդպիսի յերկ նախ մեզ համար ըմբռնելի չե ժամանակակից գրականութեան մեջ: Այդպիսի հանճարեղ գեղարվեստական յերկ չկա, կարող են լինել աննշան տաղանդներ և գրչակներ: Դուք չեք կարող ցուցց տալ, կանգնելով իստորիզմի տեսակետի վրա, մի հանճարեղ գեղարվեստական յերկ, վոր իր ժամանակի համար արտահայտած լինի ռեակցիոն գաղափարներ, որինակ Դանտեյի «Աստվածային կատակերգութիւնը», Շեքսպիրի «Համլետը», Մոլիերի «Տարտյուֆը», Սերվանտեսի «Դոն Կիխոթը», Գյոթեյի «Փառստը» և այլ բազմաթիվ գլուխ գործոցներ: Ռեակցիոն գաղափարներ քարոզող գեղարվեստական հանճարեղ յերկը «աբսուրդ» բացառութիւնն ե: Իսկ ինչ վերաբերում ե գրչակներին, սրանց հաշվի չի առնում իր կոչման բարձրութեան վրա գտնվող գրական քննադատութիւնը: Տեխնիկայի և դասակարգային «պսիխոֆիզիկայի» դարում կան բազմաթիվ այլ ազդակներ, վորոնք նպաստում են ռեակցիոն գաղափարների տարածման: Գրականութիւնն և արվեստը դրա մեջ ունին նվազագուցն մեղքը: Ծշմարիտ

և հանճարեղ արվեստագետը՝ վորը կարողացել ե թափանցել և շոշափել կյանքի և մահվան պրոբլեմները, իր ժամանակի համար յեղել ե առաջագիմական խոշոր յերեուլթ: Եսքիլեսից մինչև Վերհայնն ու Ուիթմենը, բոլոր մեծագուցն արվեստագետներն ունին հանրամարդկային այն նշանակութիւնը, վորը գեղեցիկ կերպով բնորոշել ե ընկ. Լուսաշարակին, և վորը մենք մեջ բերինք այս հոդվածի մեջ\*):

\*) Այս հոդվածը, վորի մի շարք կետերը վերաբերում են մի ժամանակ Սորս. Ռուսաստանում և մեզ մոտ տեղի ունեցող գրական-գեղարվեստական բանակովին, ծրագրված ե յեղել նախքան Համամիութենական պրոլետ-գրողների միութեան (ՎԱՊՊ) վերջին կոնֆերանսը, ուր Վարդինի, Լեխիչի և այլոց «ձախագուցն» տեսակետները պարտութիւն կրեցին:

**ԿԱՐՋ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՎԵՍՏԻ ՅԵՎ  
ԳՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ժամանակակից բոլոր ուղղութիւնները կարելի չէ բաժանել չերեք խմբի—

- ա. Իրապաշտական (ռեալիստական),
- բ. Գեղագիտական (եսեսթիկական),
- գ. Վերլուծական (անալիտիկ):

Ռեալիզմն է կոչվում այն ուղղութիւնը, վորն արվեստի նպատակն է համարում վերարտադրել կյանքը, այնպես ինչպես մենք հասկանում և զգում ենք այն, որչեկտիվ, այսպես կոչված, իրական կյանքի պատկերներով և ձևերով:

Ռեալիզմը գոյութիւն է ունեցել և մասամբ գոյութիւն ունի մինչև հիմա հետևյալ ճշուղափոքումներով.—

- ա. Հուզական կամ ռոմանտիկական ռեալիզմ,
- բ. Կենցաղական կամ ճաշուրտիզմ (բնապաշտութիւն),
- գ. Տիպոլոգիական (տիպոների միջոցով ընդհանրացնող կամ եպիկական),
- դ. Տպագրական ռեալիզմ կամ իմպրեսիոնիզմ:

Եսեսթիկական արվեստն այն է, վորը վորպես նպատակ առաջադրում է ստեղծել

այնպիսի կատարյալ ձևեր, վորոնք այսպես կոչված գեղեցկի մարմնացումներ լինեն: Եսեսթիկական արվեստն ունի չորս ճշուղեր—

- ա. Սկզբունքային պասսեյիզմ (դարձ դեպի հին ձևերը),
- բ. Վոնսավորական մոդեռնիզմ (Стилизаторский модернизм),
- գ. Սիմվոլիզմ,
- դ. Երապրեսիոնիզմ:

Վերլուծական (անալիտիկ) կարելի չէ անվանել արվեստի այն բոլոր հոսանքները, վորոնք հրաժարվելով նմանագոյութիւնից և ձևավան (արագիցիոն) կանոններից, ընթացում են արվեստի տարբերի, այսինքն նշութի (մատերիալ) թեորիական և գործնական ուսումնասիրութիւն ճանապարհով, և առաջադրում են վորպես նպատակ՝ այդ նշութից և պատարար կերպով կառուցել նոր ձևեր, վորոնց հատկանիշը բնորոշվում է վնչ իրական կյանքի արտաքին նրմանութիւնը և վոչ էլ պատրաստի շարունակութիւնը, այլ չորաքանչյուր անգամին հատուկ առաջադրված նպատակով:

Վերլուծական արվեստն անմիջականորեն անցնում է դեպի կոմսուրուկսիվիզմ—վորը զբաղվում է որչեկտիվ-տեխնիկական կառուցումներով: Այս ուղղութիւնն, այս կամ այն շափով, պատկանում են,—

ա. Կուբիզմ.

բ. Ռուսական Քուսուրիզմ,

գ. Սուպերմասիզմ,

դ. Ինժեներիզմ,

ե. Ադմուկների լերաժշտությունք:

Բ. Արվատովը այս կերպ է բնորոշում և բաժանում ժամանակակից ուղղությունները. նկատի պետք է ունենալ, Վոր այս բնորոշումները և դասակարգությունը վերջնական և կատեգորիկ չեն և կարող են վիճելի համարվել: Արվատովը ուսուսական ֆուտուրիզմի տեսաբաններից է: Մենք հատկապես մեջ բերինք այս հատվածը՝ վորպես հետաքրքիր մի նմուշ, ընթերցողին թողնելով դատել թե վորքան խելքի մտտիկ է դասակարգության այս սխեման\*):

\*) Տես՝ „Искусство и литер. в марксистск. освещении“ ժողովածուի I հատ. Բ. Արվատովի հոդվածը:

## ՊՈՍՏ-ԻՄՊՐԵՍԻՈՆԻԶՄ

(Հետ-իմպրեսիոնիզմ)

Նկարչության, քանդակագործության և լերաժշտության մեջ արվեստագետների այն խմբավորումը (Արևմտյան Յերուպայում), վորն ունի մի ընդհանուր ձգտում—հակադեյուս նստուրայիզմին (իմպրեսիոնիզմ և ցեո-իմպրեսիոնիզմ): Մա՛ պոստ-իմպրեսիոնիզմի լայն առումն է: Ավելի նեղ առումով, նկարչության և քանդակագործության մեջ պոստ-իմպրեսիոնիզմ է կոչվում այն ուղղությունը, վորն արվեստի մեջ ձգտում է ինքնա-արտահայտության, խուսափելով իրականության ճշգրիտ վերարտադրությունից, ընդունված հին ձևերից: Այս ուղղության են պատկանում Սեզանը, Մատիսը և այլն, հայ նկարիչների մեջ՝ Մ. Սարյանը և մասամբ՝ Հ. Կոջոյանը:

Կուբիզմը նույնպես մտնում է արվեստի այս ընդհանուր շարժման մեջ: Կուբիզմը աշխատում է «պատկերել» կամ տալ (նկարչության մեջ) առարկայի ամբողջությունը (totality), այսինքն իրը՝ ակտիվ և ստեղծագործական (creative) շրջապատի մեջ, շրավականանալով առարկայի ֆիզիքական շրջագծերը (contour) միայն ներկայացնելով, այլ

այն ամենը՝ ինչ զուգորդվում է առարկայի մտավոր պատկերի (հղացման) հետ: Սրա հետևանքը լինում է մի շարք չերկրաչափական ֆիզուրներ, իրար խաչաձևող, միջադիր ու հակադիր գծեր և հաճախ թափանցիկ մակերեսներ:

**Փուտուրիզմը**—նկարչության մեջ, դիտողին դնում է նկարի մեջ, միաժամանակ արտահայտելու համար մի շարք իրար հաջորդող շարժումներ և տպավորություններ:

Յերաժշտության մեջ ֆուտուրիզմը բացասելով հինը, աշխատում է գտնել ինքնա-արտահայտության բոլորովին նոր և որիպիսակ ձևեր, (ադմուկների չերաժշտություն):

Ինչպես տեսնում ենք, Արվատովի բնորոշած վերլուծական արվեստը բավական մոտ է պոստ-իմպրեսիոնիզմին, իր մեջ ընդունելով ֆուտուրիզմը, կուբիզմը, ադմուկների չերաժշտությունը:

## Ի Մ Փ Ր Ե Ս Ի Ո Ն Ի Չ Մ

(Տպավորապաշտություն)

Փրանսիայում առաջ չեկած նկարչական մի դպրոց, հիմնված Եդուար Մանեյի կողմից (1832-83): Հետագայում ավելի զարգացած և ձևափոխված Բլոզ Մոնեյի կողմից: Ունեցել է տաղանդավոր և հանդուգն ներկայացուցիչներ, ինչպես Սիզլեյ, Պիսսարո, Դեկա, Ռաֆայելլի, Թենուար և այլն, վորոնք

հին տրադիցիոն իդեալներին հակադրեցին նորը: Այս դպրոցին պատկանող նկարիչները ձգտում են արտահայտել արտաքին աշխարհի անմիջական տպավորությունը, առանց դիմելու պատկերացված չերևույթների հատկանիշների ուսումնասիրության և վերլուծության (անալիզ): Նրանց պիսավոր նպատակը և առարկան դարձավ գուճավոր լույսի նկարչությունը: Նրանք կատարեցին հետաքրքիր փորձեր գուճ գույներ (ներկեր) գործ ածելու ուղղությամբ, առանց խառնելու ներկերը կողք կողքի դնելով՝ աչքին տալով ուժեղ լույսի տպավորություն: Իմպրեսիոնիստների և պոստ-իմպրեսիոնիստների զլխավոր տարբերությունը կայանում է նրանում, վոր առաջինները մեկնում էին լույսից և վերջանում էին ծխի և գուրջու մեջ, մինդեռ վերջինները (որինակ Սեզանը) մեկնում են գույնից և վստահ գնում են դեպի լույսը, —ասում է մի հայտնի ֆրանսիացի քննադատ: (Նույնը կարելի է ասել Մարյանի և Կոջոյանի մասին, վորոնք ձրգտում են վոչ թե դեպի գույնը այլ՝ լույսը):

Իմպրեսիոնիստներից մի քանիսին կոչում են «բաց ողի» նկարիչներ (plain airiste), կոմիսիոնիստներ (luministe) (լուսավորություն բառից) և (pointilliste) (կետ բառից):

Պրակտիկական մեջ իմպրեսիոնիզմը ձրգտում է դեպի անմիջական տպավորության հաճախ ծայրահեղ սուբյեկտիվ վերարտադրությունը:

## Ե Ք Ս Պ Ր Ե Ս Ի Ո Ն Ի Ձ Մ

Նկարչութիան մեջ, իմպրեսիոնիզմի հակառակ, եֆսպրեսիոնիզմը (արտահայտութիւն բառից) ուշադրութիան կենտրոնն է դարձնում կոնցսուկսիվ (կառուցող) վոզին. «գիտակցութիւնից» դուրս ստեղծագործող չերևակայութիան ուժի միջոցով ինքնիրեն դրսեվորում է իր հաւրական արտահայտութիւմը, սպեկուլատիվ կերպով հղանալով ձևեր. մինչդեռ իմպրեսիոնիզմի մեջ գիտակցութիւնը կամ ճանաչողութիւնը կախում ունի զգայական տպավորութիւններից, վոչ թէ ներքին, այլ արտաքին աշխարհի իմպրեսիոնիստական (տպավորական) ճանաչողութիւնից.—(Վ. Հսուկենշտեին):

Վորպես գրական ուղղութիւն՝ եֆսպրեսիոնիզմը հակազդեցութիւնն է նաաուրալիզմին և սեպիլիզմին: Ռեալիստ արվեստագետը կամ գրողը խառակսերիզացիալի չէ չենթարկում մարդիկ և իրերը, մինչդեռ եֆսպրեսիոնիզմը չի հատկանշում, խառակսերիզացիալի չի չենթարկում—տիպարները չի տալիս, նուշնիսկ հաճախ շատ և հեռանում իրականութիւնից և հավանականութիւնից:

Գերմանացի նորագունը գրամատուրգներին՝ Գ. Կալգերի պիեսներում հանդիպում էք անձանց, վորոնք նման չեն վոչ մի իրական մարդու, այլ զուտ գաղափարի մարմնացումներ են, մտածող և զգացող «անանուն խրովիլակներ», սակայն, վորոնք մտածում և զգում են ինքնուրուի կերպով:

## Ս Ի Մ Վ Ո Լ Ի Ձ Մ

Այս ուղղութիւն մասին շատ և խոսվել հաչ գրականութիւն մեջ, վորովհետև մենք ունեցիկ ենք տաղանդավոր սիմվոլիստներ, ինչպես—Սիամանթո, Տերյան, Մեծարենց, Չարենցը, սկզբնական շրջանում, ևայն: Սակայն տարբեր մարդիկ տարբեր կերպով են բացատրում սիմվոլիզմը, ինչ վոր հասկանալի չէ, վորովհետև գրական-գեղարվեստական ուղղութիւնները գիտական կամ փիլիսոփայական ամրակուտ սիստեմներ, որենք ներ և ֆորմուլաներ չունին: Այնուամենայնիվ սիմվոլիզմը ունի մի քանի ընդհանուր գծեր, վորոնցմով հատկանշվում է, և վորոնք պետք է ուսումնասիրել չմոլորվելու համար: Դեպք է չեղել մեր զգորոցներում, չերը ուսուցիչը, գաղափար տալու համար սիմվոլիզմի մասին, որինակ է բերում Մաքսիմ Գորկու «Մըրկահավը» արձակ բանաստեղծութիւնը, սիսամամը չենթադրելով, վոր չեթէ մի գրվածքի մեջ այլաբանութիւն կամ սիմվոլ կա, այդ գրվածքը սիմվոլիստական է: Սա մի ապացույց է, թէ ինչպիսի թիւը հասկացողութիւն կա գրական-գեղարվեստական ուղղութիւնների մասին, մինչ աչն աստիճան՝ վոր սիմվոլիզմին տրամագծորեն հակառակ, ավելի շուտ ուսմանտիկ մի բանաստեղծութիւն համարվում է սիմվոլիստական: Նման թիւը հասկացողութիւն աշակերտին կարող է միայն մոլորեցնել և առաջնորդել «սիմվոլիստական» համարելու:

բանաստեղծութեան մեջ շատ հաճախ գործածված նմանութիւնները, համեմատութիւնները, ալլաբանութիւնները, (ընդլայնված մետաֆորները), նուշնիսկ առակները, վորոնք գուտ փոճական ձևեր են և կապ չունին սիմվոլիզմի կամ մի այլ ուղղութեան հետ:

**Սիմվոլիզմը**, վորպէս գրական-գեղարվեստական ուղղութիւն, հատկապէս պոեզիայի մեջ, յերևան չեկաւ 80-ական թվերին Ֆրանսիայում և Բելգիայում, ունենալով կարեւորութիւններ, ինչպէս՝ Մալլարմէ, Վեռլեն, Մետերլինկ և այլն: Մի քիչ ալլաուումով՝ սիմվոլիզմը գործ է ածվում բնորոշելու համար Հաուստմանի վերջին շրջանի պիեսները, և յերոպական գանազան գրողների յերկերը վորոնք ունին **սիմվոլիզմի** բնորոշ գծերից կարեւորները: Ռուսական իրականութեան մեջ ակնառու սիմվոլիստներ են Բրյուսովը, Բալլմոնտը, Բլոկը և վերջերս վաղճանված տաղանդավոր լիբրիկ Յեսենին:

Ֆրանսիայում սիմվոլիզմը հակադրեցութիւն էր Լըքոնտ-դը-Լիլի և-Փ.-Մ. դը-Երիշի պառնասականութեան (բանաստեղծութեան մեջ՝ ծայրահեղ որդեկրիվութեան հասցրած սեպիզմ) և գոլայական նատուրալիզմին: Սիմվոլիստները պրեթէ արհամարհում էին իրական յերեուլթները, և ձրգտում էին գեպի ընդհանուր ճշմարտութիւններ և գաղափարներ, աշխատելով նրանց մարմնացնել անլուծելի, «սիմվոլների» միջոցով: Պոեզիան թեքելով գեպի յերաժը-

տութիւնը\*), նրանք ոգտվում էին վերջինիս հաճախ տարտամ և անբացատրելի հատկութիւնից, արտահայտելու համար խորհրդավոր ու միստիկ հոգեկան կացութիւններ, և աշխատում էին գտնել գաղտնի, անտեսանելի կապեր իրենց «յես»-ի և արտաքին աշխարհի յերեուլթների միջև: «Անտառի ծառերը սիմվոլներ են» Բոդլեռի համար, և արթնացնում են այնպիսի դգացմունքներ, վորոնք յենթակա չեն անալիզի:

Մի քանի սիմվոլիստներ հաճախ ճգնում են կապեր գտնել հնչուլնների, գուլների, նուշնիսկ բուլրերի միջև:


Մի շարք սիմվոլիստների շատերը համարել են գեկագենտներ (անկապաշտ): **Իեկագենսը**, անկասկած, արդուլնք է կապիտալիստական «գեր-քաղաքակրթված» հասարակութեան, վորի գեղագիտական ճաշակը սկսում է ալլասերվել և գնում է դեպի անկումը: Սրա հետևանքը լինում է այն, վոր այդ ալլասերված ճաշակը պահանջում աննորմալ և հիվանդագին զգալութիւլններ, փնտոելով նրանց, մի կողմից **միսեցիզմի** (սպիրիտիզմ, կապ մեռած հոգիների հետ, և այլն), մյուս կողմից՝ արվեստի տարակենտրոն (excentrique) և արտաոոց ձևերի մեջ:

\*) Վերլենի՝ վորպէս սիմվոլիզմի բնավատ հանգանակը՝ ընդունված նշանալոր վոտանալորի մեկ տողն է հետևյալը:

De la musique avant toute chose

(Ամեն բանից առաջ յերաժշտութիւլնը.)

Սրանով մասամբ բացատրվում է յերաժշտականութեան հատկանիշը, վոր կարելի չէ գտնել գրեթէ բոլոր սիմվոլիստ բանաստեղծների մոտ:



ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

1. Գաբրիել Սունդուկյան . . . . .	5
2. Սունդուկյան, Բաֆֆի, Թումանյան . . .	34
3. Յեղիշե Չարենց . . . . .	41
4. Մի քանի խոսք ընդհանրապես տաղա- չափության մասին . . . . .	69
5. Գրականության և արվեստի այժմե- ական հարցեր . . . . .	73
6. Կարճ ծանոթություններ արվեստի և գրական ուղղությունների մասին .	102

Վ Ի Թ Ս Կ Ն Ե Ր

62	Տպագրիչ	Կարապետ Կարապետյան
9	հաճարեղ	հանձարեղ
14	հասկազիծ	հատակազիծ
35	սոմատիկ	սոմանտիկ
47	Թումանյանին	Թումանյանին
37	սեղծագործության	ստեղծագործության
37	Թումանյանի պես	Թումանյանի եպիկալի պես
52	հանգիստ են դուրսը	հանգիստ են: Դուրսը
79	ցախություն	ձախություն
92	համարում ենք	համարում ենք

«Ազգային գրադարան»



NL0169548

1090

801

10-52